



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an old book. The cover is primarily decorated with marbled paper in shades of tan, beige, and light brown, with intricate, vein-like patterns. A vertical strip of dark red, textured material, likely leather or cloth, covers the spine on the left side. In the bottom-left corner, there is a small, rectangular white paper label with the number '1677' printed in a bold, black, sans-serif font. The overall appearance is that of a well-used, antique volume.

1677

21




1168

~~1268~~

XIV of May

569



ԱՔԼՕՐ ԵՂԲԱՅՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶՈՒԱՐՃԱԼԻ
ԵՒ
ԱՌԱԿԱԽԱՌՆ



1647

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆՆՈՒԹՅՈՒՆ
ՎԷՉԻ ԽԱՆ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԷՈՎՅ. ՏԵՐՈՅԵՆՑ

1969

REPORT FOR 1900

REPORT OF THE BOARD OF DIRECTORS

FOR THE YEAR ENDING



1901



THE BOARD OF DIRECTORS

OF THE COMPANY

RESPECTFULLY SUBMIT

ԱՔԼՕՐ ԵՂԲԱՅՐ

ԿԱՄ

ՄԸՆԿԸՆ ՄԸ ՊԵՏԱՌԹԻԹԻՆՏ,

ԵՌԱԾԱԼԻՑ ԻՄԱՍՏԻԹ



ՄԻՏՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ ՅԱՅՍ ԻՄԱՍՏ ԱՄՓՈՓԻՆ ԹԻ

Անդ երկիցե՛ն գերկիւղ, ուր ոչ իցէ երկիւղ.

Ըստ հասարակաց ասածին Բէ

Ու մմտարդուն թաշ պաշ ետրար օ

Անցեալ ժամանակաց մէջ մարդ մը ըստ բաւականին
հարուստ ըլլալով կը կարգուի եւ քիչ ատենէն մտնչ
զաւակ մը կուսննայ, կայտառ ու խելացի, զոր տես-
նողը իր մանկութեան ատենէն կը դուշակէր թէ այս
տղայն մեծ ու անուանի մարդ մը պիտի ըլլայ: Այս
երախայ տղեկը՝ դժբաղդ ըլլալով, երկու տարուան կ-
ղած ատեն հայրը կը մեռնի, եւ մայրը այրի, ու ինք
որք կը մնան: Այս տղան մինչեւ որ հինգ տարուան
կըլլայ, ունեցած ստակնին կը հատնի ու յետին շքա-

ւորութեան մէջ կը մնան: Այնուհետեւ կսկսին աւ-
 նը մէջ եղած պղծեղէնները, բրդեղէնները եւ այլն
 ծախել, ու օր ըստ օրէ հացի ստակ ձարել: Այնքան
 լսէ, թէ կարօտութիւնը մարդուս խելքին եւ գլխուն
 ինչ կերպ փորձանքներ կը բերէ, որուն լաւ հմուտ եւ
 տեղեակ են բազմիցս դառն բաժակը քամողները:

Արդ՝ այս կարօտական կենաց մէջ տանջուելով՝ իր
 օրհորդ մայրը երկրորդ ամուսնութեան անցնելու կամք
 ալ չէր ընէր. քանզի առաջին պսակով մնալը առաջի-
 նութիւն կը սեպէր. եւ առաւել աղէկ կը համարէր
 սրտի մտօք եւ յօժարութեամբ չքաւորութեան մէջ
 մնալ, քան երկրորդ անգամ ամուսնանալ: Աւստի
 քիչ շատ իր ձեռքէն եկած ը կը դործէր, գաւրպա (չօ-
 բապ) կը հիւսէր եւ ուրիշ կանացի արհեստներ կը բա-
 նէր ու աս կերպով իր գոյքը աղուն հացը կը ձարէր:
 Արդոր աղան եօթը տարեկան հղաւ, վարժապետի
 քով առաւ որ ուսմունք ու մարդավարութիւն սովորի-
 զի գիտութիւնն մայր է ամենայն բարեաց, իսկ ագի-
 տութիւնն ծնող է ամենայն չարեաց, ինչպէս որ հա-
 սարակաց առածը կըլսէ. Ա՛ երեւոյ՛ հե՛րեւոյ՛ նե՛րեւե՛ր
 երեւոյ՛, հերեւոյ՛ ալ ինչն՛ + ինչն՛ հեյրեւոյ՛ն, եինե՛ հերեւոյ՛
 ուրե՛, հերեւոյ՛:

Հիմա այս աղակը ամէն առաւօտ անարտունջ, սիրով
 եւ խնդութեամբ իր վարժապետին կերթար. եւ մեծ

Չանքով իր սուսմանցը կը պարտապէր մինչեւ իրիկունն անանկ որ՝ 16 տարեկան եղած ատենը՝ բոլոր իր աշակերտակիցները գերսզանցած էր, եւ ոչ ոք կարող էր իր հետ վիճելու ինչեւիցէ նիւթի վրայ: Այս որբուկ տղան ուսման համը այնչափ առեր էր որ՝ ուրիշ արհեստի երթալ չէր ուզեր. բայց ինչ ընէ. աղքատութիւնը զիրենք յոյժ պատած ըլլալով, յակամայից բանադատեալ մօրկանը հետ խորհուրդ կընէ, որ երթայ արհեստ մը սովորի, որպէս զի իրենց օրական ապրուստը ճարելու միջոց մը ըլլայ:

Բայց որովհետեւ խեղճ տղիկը առանց ընծայ մը տալով իր երախտագիտութիւնը իւր վարժապետին յայանելու՝ չէր ուզեր դպրոցէն հրաժարիլ, ուստի կը թախանձէր իր մայրը, որ իր վարժապետին տանելու ընծայացու բան մը տայ: Աղքատիկ մայրը սիրտը ցաւելով ըսաւ. ո՞վ որդի ինչ ունիք որ ինչ տանիս, այս աղքատութեանը բան կը դիմանայ ըստ առածին թէ Պոս որճաղա գա՞ր ճը տայանը: Վարի բակը աքլոր (խօրօղ) մը կայ, եթէ կուզես նէ, այն ապր տուր վարժապետիդ: Արբուկ տղայն մտածեց թէ ինչպէս տանի, քանզի նուէրը պզտիկ բան մը ըլլալուն կամբջնար. բայց աղքատութիւնը մտածելով՝ աղէկ սեպեց տանիլը՝ քան դատարկաձեռն երթալը, ըստ առածին թէ՛ Զօպան էրճաղա՛ շամ սփռը:

Ուստի 'ի լուսանալ առաւօտուն կանուխ արջօրը
 քղանցքին (իւէշ) ներքեւը առած՝ վարժապետին տունը
 կերթար. ճամբան երկու աւաղակ դէմը ելան ու ար-
 ղայն բանելով կողոպտել կուգէին. երբ տեսան որ
 արջօրէն ուրիշ բան չունի ձեռքը, բռնի դանի ձեռ-
 քէն առին: Տղայն շատ կաղաչէր որ չառնեն, քան-
 զի վարժապետիս տանելու ուրիշ բան չունիմ, կըսէր.
 բայց ո՛վ մտիկ կընէր: Գողերը բարկացան եւ մէկ
 երկու ապտակ ալ երեսին դարկին որ լուէ. տղայն հիմա
 յոյսը կտրած, ծեծիկ ալ կերած ախ ընելով ըսաւ.
 հէ՛յ մարդիկ, դուք այն առածը չէ՞ք գիտեր որ կըսուի,
 Ա՛ւմ քո-հարէնին ահին, շէտք ահեոտէ ահեստէ: Տը-
 դան սրաի ցաւօք աւաղակաց ըսաւ որ արջօրը ձեզի
 շատի պիտի նստի, բայց մտիկ ընող չկար. հազար խը-
 բատ մէկ ստակ, եւ մէկ ստակ՝ հազար վաստակ: Հիմա
 տղեկը դատարկածուն մնալով սկսեց մտածել, եւ
 վարժապետին տանելու ուրիշ բան ալ չունենալով՝
 խորհեցաւ որ արջօրը աւաղակաց չկերցունելու համար
 հնար մը գտնէ. ուստի ինքզինքը ծածկելով՝ հեռուէն
 գաղաուկ կերպով անոնց ետեւէն կերթար. մինչեւ որ
 անոնք քաղաքին բերդէն դուրս ելան: Ա՛յս քաղաքիս
 անունը Սէնթէմ կըսուէր, եւ տղուն անունը Թէք-
 նամ, բայց վերջը իր գործէն Ա՛բլոր մականուանեցաւ:
 Արթալով՝ երթալով տեսաւ տղայն որ անոնք երկուքը

մէկ ձորի մէջ իյան, եւ տղան ալ ծածուկ ետեւնուն
 կը գիտէր: Տեսաւ որ քարայրի (մաղարա) մը առջեւ
 գացին ու դուռը բացին ներս մտան, քանզի բնակարան-
 նին ան է նզեր. ուստի դուռը գոցուածին պէս, շուտ
 մը տղայն վազեց եւ գնաց տկանը դրանը տալով լոկիկ
 մտիկ կընէր. տեսաւ որ ներսը շատուորի ձայն կայ, եւ
 աղէկ մտիկ ըրաւ որ այն իր ձեռքէն աքլօրը առնող-
 ները՝ միւս ընկերներուն կըսէին թէ՛ այս գիշեր մին-
 չեւ լոյս պտըտելով, ամենեւին բան մը չէ տանք, միայն
 թէ տղու մը ձեռքէն այս մէկ աքլօրը խլեցինք, բիչ շատ
 այս գիշերուանս պտուղը այս տեսանք: Կրսէն տը-
 դայն այս խօսքերը լսելով իմացաւ ալ որ իրենց մէջը
 կըսէին թէ, երբարք, մենք հիմա ինչ պիտի ուտենք,
 աս առտու ուտելու պատրաստութիւն չտեսանք, հիմա
 մեր մէջէն մէկը թող քաղաք երթայ, 40 հաց եւ ոչ-
 խար մը եփել տայ ու բերէ որ ուտենք: Աստուած
 ողորմած է. հարկաւ յառաջիկայ գիշեր բան մը կը
 հողանք: Մէջերնուն մէկը հստեցաւ որ երթայ ու-
 ղածնին պատրաստէ. տղայն դրսէն իմանալով՝ մէկ ան-
 կիւն մը պահուեցաւ: Այն մարդը ելաւ քաղաք եր-
 թալու. տղան ալ աս մարդուն ետեւէն երթալով, երբ
 մարդը քաղաքին բերդէն ներս մտաւ, տղան համար-
 ձակ եւ աներկիւղ սկսեց քովն ի վեր քայլել, ինչու որ
 գողը զսնի չէր ճանչնար: Իմա գալով փռան մը առ-

ջեր Տասան, ուսկից գողերը միշտ հաց կառնէին, ու
 րսնք 40 հոգի ըլլալով առտու եւ իրիկուն 40.ական
 հաց կառնէին, եւ փռնապանը ասոնք կը ճանչնար, բայց
 գող ըլլալնին չէր գիտեր, մանաւանդ զանոնք երեւելի
 պալատէ մը ըլլալ կը կարծէր, ըստ առածին թէ ին-
 անքն ալաճասը ելէրտէ տէր:

Երկուքը մէկ տեղ հացագործին առջեր կանգնե-
 ցան. գողը կըսէր թէ ամէն օրուան պէս 40 հաց ե-
 փէ. հիմա աս տղան, որ գողին քովն 'ի վեր էր, կը-
 սէր հացագործը յորդորելով թէ, աղէկ ըլլայ ե-
 փածդ, եփուն ըլլայ խմորը ճերմակ ըլլայ, եւ այլն:
 Գողը տղուն միտքը չհասկնալով անոր առ հացագործն
 ըսածը իրեն բարերարութիւն մը կը սեպէր, ուստի
 հոգ չէր ընէր. եւ հացագործն ալ կը կարծէր թէ, աս
 տղան ալ 'ի նոցանէ է: Ա՛ երջապէս գողը ժամէ մը
 կուգամ կառնեմ, ըսաւ. եւ գնաց ոչխար մը գնեց ու
 խոհարարի փուռ մը տարաւ, որ եփեն. իսկ աս տղան
 գողին քովէն բնաւ չէր զատուեր. եւ խոհարարին ալ
 առաջինին պէս կըստիպէր որ՝ լաւ կարմրցունէ իւղը
 չկորսնցունէ, հոլմ չթողու, եւ այլն: Աս գողը դար-
 ձեալ տղուն միտքը չիմացաւ եւ խոհարարն ալ հացա-
 գործին պէս զանի 'ի նոցանէ կը կարծէր: Գողը՝ ա-
 սոր ալ ըսաւ թէ ժամէ մը կուգամ կառնեմ եւ դը-
 նաց. տղան զատուեցաւ ու սկսեց արջօրի կսկիծը մէկ

մէկ հնարքներով հանել, զոր պիտի խօսիմք: Իսկ դուն
տես թէ ինչպէս հնարքներ կը սովորեցունէ մարդուս
միտքը: ըստ առածին թէ, Եւ ռաբբի հելլէնէսը որ
իմէ պիտի ճշտէ:

Տղան՝ գողէն առաջ փուռը դնաց ու ըսաւ հացը
երկեցաւ նէ, տուր տանիմ. հացագործն ալ դանի ա-
նոնց ընկերներէն կարծած ըլլալով, հանեց հացերը
տուաւ. տղան ալ հացերը առնելէն վերջը պատուիրեց
որ, եթէ իմ ընկերս գայ, հացերը ուզէ նէ, Եւրօր
եղբայրնիդ եկաւ, տուաւ ու դնաց, ըսէ. հացագործն
ալ շատ աղէկ ըսելով՝ քու եային (չէ թէ չէ) վրայ նշա-
նակեց. տղան անկէ ելաւ, խոհարարին փուռը դնաց ե-
փած ոչխարը առնելու, եւ անոր ալ պատուիրեց որ,
ընկերս գայ, ուզէ նէ, ըսէ որ Եւրօր եղբայրնիդ ա-
ռաւ: Հացերն ու ոչխարը շիտակ առնելի մօրը տա-
րաւ ու ըսաւ. աքօրիս կսկիծը քիչ մը հանեցի. եւ
դրացիները կանչելով՝ աղէկ մը կերան խմեցին:
Հիմա տղան այսչափով գոհ չըլլալով՝ դնաց ցորեկ ա-
տեն մաղարային քովերը պահուեցաւ բանին վախճանը
տեսնելու. միջոցը մէկ ժամ անցնելէն ետեւ տղան տե-
սաւ որ՝ այն հացի ու մսի համար գացող գողը ձեռքն
դատարկ, անձ կած, եւ գլուխը կտտած կուգար: Հի-
մա տղայն իր մտքէն այն առածը կը սէր ժպտելով մը.
Մեքարսըղա մեքարսըղա պիտի ճշտէ, եօտի-դէ գաճառն
պիտի ճշտէ: Իողը մաղարան մտաւ, դուռը գոցեց

աղան իսկոյն վաղեց, գլուխը գրանը գրած, ներսը
 ինչ խօսելնին մտիկ կընէր: Անկերքը գողին կը հար-
 ցունէին թէ ո՞ւր են հացերն ու ոչխարը. ան ալ ըսաւ.
 հէյ եղբարք. չեմ գիտեր, ինչպէս եղաւ. մէկ տղայ
 մը՝ ուր գացի, քովէս չղափուեցաւ, ամէն բանիս տեղ-
 եակ եղաւ, ետքը գատուեցաւ, գնաց. վերջը երբ
 դարձայ հացերն ու ոչխարը առնելու, հացագործը եւ
 փունսպանը պատասխան տուին թէ, Աբլօր եղբայրնիդ
 եկաւ. առաւ, տարաւ. չիմա մեր մէջը Աբլօր ա-
 նունով ո՞վ կայ, չեմ գիտեր. մենք 40 հոգի ենք.
 քառսունքս ալ մէկզմէկ գիտենք. ուստի Աբլօրն ո՞վ
 է, չեմ գիտեր. այս խօսքը, որ արլօրը գողցող ըն-
 կերները լսեցին, անմիջապէս հասկըցան թէ այն տը-
 դուն բանն է. եւ իրարու ըսին թէ յիրաւի ինչպէս որ
 աղան մեզի ըսաւ թէ գինը ձեզի շատի կը նստի, գործով
 ալ յայտնեց. եւ աս ալ կըսէին թէ Աստուծոյ փառք.
 մենք 40 հոգի ենք, մեզի ծառայ մը առնել պէտք է,
 որ մեզի կերակուր պատրաստէ: Այս խօսքերը աղան
 գուրսէն լսելով՝ շուտ մը վաղեց, տուն գնաց, իր կեր-
 պարանքը փոխեց, եւ գերիի կերպարանք մտաւ, ու իր
 մօրը ըսաւ որ գինքը տանի Ասիր փողարը ծախէ իբրեւ
 գերի, բայց կըսէր ալ որ, որու որ ըսեմ նէ, գիտա-
 նոր պիտի ծախես, ոչ ու չիշի: Մայրը՝ գուրծը չը-
 տանելով, եւ աղ գործը իմ գործս չէ ըսելով սիրտը

կը կտրակէր տղուն վրայ, թէ ինչպէս տանի եւ իբրեւ դե-
 րի ծախէ . բայց իւր օգուտ . տղան սաստիկ կը թա-
 խանձէր ըսելով թէ մայրիկ , մի վախնար . ինձի բան
 մը չըլլար , ես զիս շուտով կազատեմ գնողին ձեռքէն ,
 միայն թէ դուն զիս ծախէ . հոգ մի ընէր : Խեղճուկ
 մայրը ալ չդիմանալով տղուն աղաչանքին , աչքը ար-
 տասուօք լեցուած կուլար ինչպէս որ մայրերուն գու-
 թը յայանի է . թէպէտ ուրիշներն ալ այսպիսի խեղճ
 տեսարանի մը վրայ կը գթան , բայց ոչ մայրերուն
 շարի , ըստ առածին թէ *Աղլարսս անամ աղլար , Գու-*
տարսս Էալան աղլար :

Շիմա գթալիր մայրիկը՝ իր խեղճ տղեկը առջեւը
 ձգած տարաւ Ասիր փաղարը ծախելու . երբ հոն հա-
 սաւ , իւրաքանչիւր սք սկսաւ մէյ մէկ գին դնել տը-
 դուն , մինչեւ որ ան քառասնից մէջէն երեք հոգի ե-
 կան դերի մը գանել : Տղան մօրը դրդեց թէ զիս առնց
 ծախէ որչափ ալ սք գինը քիչ ըլլայ . եկան գողերը ,
 եօթը քէսէի դինը կտրեցին եւ բենձիկը առին ու ար-
 դան տարին մազարան . ուստի մայրը տղան ստըկի փո-
 խարկելով , եւ տղոյն իր ազատութիւնը գերութեան
 վաճառելով , իւրաքանչիւր սք իր տեղը դարձաւ : Տղան
 ամէն ջանքով անոնց ծառայութիւն կընէր . առանց
 ձանձուցուելու թէ ո՛վ է . երբ գիշեր եղաւ , իրենց սո-
 վորութեանը համեմատ ելան 39ը մէկտեղ դողու-

Թեան գացին, միայն մէկ հոգի մը իրենցմէ հոն թողուցին, որ աղուն հետ պահապան ըլլայ: Արբ անոնք երթալով՝ ասոնք առանձին մնացին, տղան տեսաւ որ մաղարային մէջ ցեղունէն (Թավան) կախուած երկաթէ կեռ (չէնկէլ) մը կայ, պահապան կեցողին հարցուց թէ՛ հէր իմ. աս ի՞նչ չէնկէլ է, որ հոս կախեր էք. պահապանը պատասխանեց թէ, երբ որ լեռներէն հարուստ մարդ մը բռնենք նէ, հոս կը բերենք եւ աս չէնկէլը կոկորդը (պողազ) կանցունենք եւ այսպէս շարաշար կը սպաննենք, ու ունեցածը մենք կը ժառանգենք: Տղան հարցուց թէ աս բանը իմ խելքիս դէմ է, ինչպէս կընէք, աս չէնկէլը վերն է, ինտոր կըլլայ որ մարդուն վիզը հոս կը հասնի. պահապանը բաւաւ, ոտքին տակը ածող մը կը դնենք. տղան ըսաւ, ասի դժուար եւ անհասկանալի խօսք է, գործքով ցոյց տայիր, որ տեսնէի եւ իմանայի, քանզի առած է կըսուի. Ա՛հ եւ ի՛նչ ի՛նչ, որեւէ հասարեազ պէնդէն:

Նարկացաւ պահապանը թէ աս ի՞նչ խօսք չհասկըցող տղայ ես. աս հա ասանկ կընենք ըսելով՝ ածողը ոտքին տակը առաւ եւ չէնկէլը պողազին դըրձցուց ու կըսէր, աս հա ասոս ո՛վ անմիտ, այսպէս կըլլայ. այս խօսքը՝ որ կըսէր, տղան յանկարծ ածողը ոտքին ներքեւէն քաշածին պէս, մէկէն՝ ի մէկ չէնկէլը պո-

զազը անցաւ ու կախուեցաւ մնաց մահուան մօտ օ
 Տղան անմիջապէս խել մը սառակ մաղարայէն ժողովեց եւ
 պատին վրայ ալ գրեց որ, այս գործը Աբլոր եղբայրը
 ըրաւ, տեսէք, դեռ ձեր գլխուն ինչեր պիտի բերէ .
 ու գիշերանց արտորնօք մաղարայէն դուրս ելաւ, եւ
 գնաց մօրը պատմեց ըրածները . նաեւ մօրը կըսէր ալ
 թէ, մայրիկ . այս իմ ըրածս մեղք կամ մարգասպա-
 նութիւն չկարծես . քանզի կըսուի թէ Տե՛սե՛լն
 հագգըն՝ անսրը կէլեր . Գողերը՝ երբ ետ դար-
 ձան, տեսան որ մաղարային մէջ շէնկէլէն մէկը կախ-
 ուած կը տքայ . մէկէն վար առին, նայեցան որ
 պահապան դրած ընկերնին է . եւ գիշերն ալ լուսնա-
 նու մօտ էր : Տղան ալ առաւուանց կանուխ Արոպացի
 բժշկի կերպարանք մտած շուկաները կը պարտէր .
 նոյն միջոցին գողերէն մէկ քանին ալ շուկան եկած
 բրժիշկ կը փնտռէին . այս ամէնը կըլլար որ արդա-
 րութեան վճիռը հասուցուի, ըստ առածին թէ շէր
 +էս իրէր +էնրէնէ, կէնէ +էնրի +էնրէնէ . կամ թէ
 լշիֆէ, պուլճա : Աոյն գողերը այս բժիշկ տղուն
 պատահելով՝ կաղաչէին ըսելով թէ, հասի՛ր, քեզի
 մինչեւ 15,000 դահեկան կուտանք, եթէ մեր հի-
 ւանդը առողջացունես շուտով : Եւ առ աղէկ ըսու-
 աղան, անոր առողջանալը ինձմէ դիտցէք . շուտով
 հիմա բաղնիք բերէք : Անոնք ալ շուտ մը գացին .

առին բերին ամէնքն ալ մէկ տեղ ըլլալով. բժիշկ տղան
 բաղնիքը մըտածին պէս հրաման ըրաւ որ ամէնն ալ
 հանուին ու ներս մտնեն. եւ ինքն ալ ներս մտնելով 39
 ընկերները մէկ սենեակի մէջ դրաւ ու պատուիրեց որ
 մինչեւ մէկ ժամ կենան, ու ետքը երթան հիւանդ ըն-
 կերնաւն քով. եւ ողջացած դանելով տանին. (քանզի
 ինք հիւանդը ուրիշ սենեակի մէջ դրաւ. որ դեղը տա-
 լէն վերջը պիտի երթար, ու յետոյ իրենց քովը պիտի
 գար), բոլոր ընկերները հաճեցան, եւ բաղնիքին մէկ
 սենեակը մըտան ու կեցան. Ահա թե ալ բժիշկը անելին
 ձեռքը առած՝ առանձին հիւանդին սենեակը մըտաւ ու
 դրանը դէմ դենջակ մը կախել տուաւ. անելին (ուս-
 տուրա) ձեռքը առաւ եւ հիւանդին պատուած ծակը ա-
 նանկ մեծցուց որ հոգին հանգիստ ելլէ անկէց. անմի-
 ջապէս մահը խնտալով այն ծակէն ներս մտաւ եւ սատ-
 կեցուց չարը: Տղան դարձեալ նոյն տեղը պատին վը-
 րայ գրեց թէ V. 10 + որք V. 100 եղբայրն էր ըրաւ, ու-
 սէ + դէս էնէր պէտէ գործէ, եւ դուրս ելլելով բաղ-
 նեպանին ըսաւ որ բոլորին լաթերը ժողովէ ու իրեն
 տայ, որ տանի թիւ թսի տայ. ան ալ ժողովեց ու բնո-
 նակիրին տուաւ որ բժիշկին տունը տանի: Տղան նորէն
 դուրսը պատին վրայ գրեց թէ V. 10 իր հանդերձը կո-
 ղորտոյն ալ V. 100 եղբայրն է, ուսէ + այլ էս էնէր
 պէտէ ըէ. ու ինքն ալ տաւ բնանակիրին հետ տոււ

գնաց. (կը նայի՞ս ո՛վ ընթերցող, ի՞նչ հնարք կը բա-
 նեցաւնէ) ըստ առածին թէ Լը օլ րէ, դաշ էար :
 Գողերը մէկ ժամ սպասելէն ետքը իրենց հիւանդ ըն-
 կերին քովը գացին տեսան որ՝ արիւնը գետինը տարա-
 ծուեր ու ինքն ալ հողին փչեր մեռել էր, զարմացան
 մնացին թէ բժիշկը ինչպէս հիւանդը աս վիճակին հա-
 սուցեր էր. մէյ մ'ալ պատին վրայ գրուած տեսան որ
 Լ.Յ. Գրքը ընդ Լ. Լոր էդքայն է : Լ'նմիջապէս
 խելքեր'ին գլուխնին եկաւ, եւ շատ զղջացին արջորը
 անոր ձեռքէն առնուելուն վրայ. քանզի հիմա անկա-
 րելի եղաւ ան տղուն ձեռքէն ազատուիլը : Լ'որդ' ան-
 ճար մնացած՝ դուրս ելան որ հագուին ու մեռելը առ-
 նին եւ թաղեն. տեսան որ լաթերնին ալ չկայ. բաղ-
 նեպանը ըսաւ, կեցէք. քանզի բժիշկը լաթերնիդ
 թիւ թսիքնելու տարաւ, հիմա կը բերէ : Լ'ս ան-
 միտները՝ դուրսանը չհասկընալով՝ կըսպասէին որ լա-
 թերնին բերէ, ըստ առածին թէ, դէպէ՛ ելէ՛նէ՛ն
 դէպէ՛՛ եաղ իէլէ, սանիդին սանա եօնճա եկրիք : Ս'էյ
 մ'ալ տեսան որ դուրսի պատին վրայ ալ գրուած էր
 թէ Լ.Յ. Դեր հանդերձնէրը Լ. Լոր էդքայն էդպէս
 տեսէ՛ դէպէ՛նէ՛ դէպէ՛նէ՛ն : (Եւ յիշատակացան որ
 այն տղուն բանն է, ու սաթ անճար մնացած թէ, ընել-
 նին չգիտնալով՝ իրարու կըսէին, այս ի՞նչ հնարք է,
 որ այս տղան մեր վրայ կը բանեցունէ եւ մեռը չենք

կըրնար ճանչնար զինքը՝ Վ.ս ինչ հնարագետ ու ռիս-
կալ տղայ է, որ մեր ետեւէն ինկեր է. մէկ արլօրի
պատճառաւ մեր կանքէն ինչ գանձերու տէր եղաւ.
առոր ձեռքէն ի՞նչպէս պիտի ազատինք: Աւերջապէս
խորհեցան որ մէկը դրկեն իրենց բարեկամին, որ 39
ձեռք լաթ դրկէ իրենց հագնելու, բայց տեսան որ
դրկելու յարմար մէկը չկար, եւ ուրիշի ձեռքով ալ
գործ տեսնել չէին ուզեր. ըստ առածին թէ՛ Այլ
էն էն ելլան իս-ի:

Տղան որ լաթերն ին առած տուն գացած էր, անոնց-
մով գոհ չըլլալով՝ նորէն Վ.ս աւաւտի կերպարանք
մտաւ, եւ մէկ սակառ (սէփէթ) մը լեցուն բոկեղ (օի-
միտ), ու մէկ քանի հաս ալ թեւը անցուցած՝ բաղնի-
քին դուռը կուգայ սիմիտ ծախելու. գողերը այս
սիմիտն ձայնը դուրսէն լսելնուն պէս՝ աս սիմիտն
ին հասկըցունենք, թող երթայ մեզի հանգերձ բերէ,
քանզի բաղնիքի սպասաւորներէն ոչ որ թոյլաւու-
թիւն ունէր երթալու: Աւերջապէս սիմիտն կան-
չեցին, եւ իրենց բարեկամ վաճառականին խանու թիւ
ուր ըլլալը հասկըցուցին, որ երթայ անկէ իրենց լաթ
բերէ. բայց սիմիտն կըսէր թէ վարպետս իս կըծե-
ծէ, եթէ վաստակէս ետ մնամ: Գողերը դանի շատ
թախանձեցին ըսելով թէ գնա, մեր խնդիրը կատարէ
մենք քու ծառայութեանդ վարձն ալ կուտանք եւ

պարգևեալ կուտանք: Կեղծեալ սիմիածին՝ չէ հիմա կուտաք նե, կեթամ, չէնէ՛ չեմ երթար, ըսաւ. անոնք ալ բաղնեպանէն 10 զուրուշ փոխ առին ու աղուն տուին. քանզի մինչեւ որ չառաւ, չգնաց, ըստ առածին թէ, («Սոնա քալան արծաթալ ըր») :

1679

Արդ՝ տղան սակառ չոն ձգեց, եւ զնաց այն բարեկամ վաճառականին խանութը ու բանը հասկըցուց որ 39 ձեռք լաթ տայ. առաւ, բեռնակիրի մը տալով շիտակ իր տունը տարաւ: Գողերն անդին բաղնիքը կը սպասեն, բայց եկող գացող չկայ. յոյսերնին կը քրեւոյթ թելլաքի մը աղաչելով դրկեցին. թէլլաքը երբ վաճառականէն 39 ձեռք լաթ կուզէր, վաճառականը ըսաւ թէ ես հիմա սիմիածին մը ձեռք դրկեցի, որ ինքը ըսաւ թէ՛ ես անոնց ծանօթ եմ եւ անունս Աբլօր եղբայր է, ես ալ հաւատալով տուի. թէլլաքը աս լուրը առնելէն վերջը ըսաւ, ինչ որ է նե՛ հիմա նորէն 39 ձեռք լաթ տուր, որ այն մարդիկը բաղնիքէն ելլեն ու մեռելնին վերցունեն: Վաճառականը նորէն 39 ձեռք լաթ տուաւ, եւ եղածը պատմեց. գողերը իրր լսեցին, զարմանալով իրարու ըսին թէ աս ի՞նչ ապշու թիւն է, որ մեր միտքը տիրեր է, ու չենք ճանչնար զանի. կերեւայ թէ արտղան մեր ամեն բանին տեղեակ է, չըլլայ որ մեզ սպաննել տալու պատճառ ըլլայ յիշելով այն առա-

ծը թէ: «Քեանկարի մէջ ելէ Էօֆ ակ աննըմա թ», . Աւարի
իրենց մեռելը տարին թաղեցին եւ սղով իրենց մահա-
րան գացին. եւ վախը սրտերնին առած ըլլալով խոր-
հուրդ ըրին որ ալայն երկրէն ելլեն եւ ուրիշ տեղ
փախչին, մասն որոյ ամեն բաներնին առնելով եւ-
լան ուրիշ երկիր գացին:

Հիմա տղան իմանալով անմիտ գողերուն փախ-
չիլը, աւանդ կարդալով անոնց խնդիրն, կը տէր ինքն
իրեն. «ԱճԵԼԵԸ պաշ ելինք Դէ՛ Վէտեր լե՛քել ալ», . եւ
այս ուրախութենէն զատ ալ երեսելի հարստութեան
տիրացած ըլլալով մաճ սուսկանի մը հետ ընկեր ե-
ղած կապրէր. իր տնակը եւ մայրիկը շատ աղէկ հո-
գալով մինչեւ Քէ տարուան եղաւ նէ, սպասեց որ
պարկեշտ աղջիկ մը գտնայ իրեն կնուծեան առնե-
լու: Այս շտիս այս տեղս բաւական սեպհերը ըստ
առածին թէ «Աղնայանս ո՞րքն փնէր աղ, տղնամայանս
գալալ զատրնայ աղ», .

Հիմա մենք մեր պատմութեանը նայինք որ այն
տըղուն հնարագէտ գործքերը, շարունակաբար ին-
չեր տեսնելը եւ մինչ ՚ի մահ գլխէն ինչ անցքեր
անցնիլը առակներով պիտի պատմենք ՚ի զբօսանս
ընթերցողաց:

Նոյն տղուն վարքն ու կացու թիւնը գրօ-
սանքի և գուարճու թեան համար պիտի պատմեմ :

Վճեն իմաստուն անձինք եւ ամեն իմաստալից
մատեաններ ամեն ատեն մեզի կը քարոզեն որ՝ «Համ-
բերութեան պտուղը անոյշ կը լլայ» եւ համբերողաց
գործը առաքի՛ ու թեան մէկ մասը կը սեպեն : Վճեն
անյաջող կամ վշտալից եւ դառն դէպքերուն վերջը
անոյշ կը լլայ, եթէ մարդ համբերութեամբ սպասէ նէ,
ինչպէս որ ծառաց պտուղները առջի բերան անհամ ու
թթու կը լլան : Բայց վերջը կանուշնան, ըստ առածին
թէ՛ : «Սուր եւ խորագ հեղաօլոր, Բասի եւ Բասը՝ մի լալ» :

Երդ՝ այս համբերութեան անոյշ պտուղը այս տղուն
աղջկանը վրայ պիտի երեւնայ, զոր հետզհետէ պիտի
պատմեմք : Ինչպէս որ առաջ ըսինք, սոյն տղան մէկ
պարկեշտ աղջիկ մը գտաւ եւ իրեն կենակից ըրաւ : Եր-
կու տարի անցնելէն վերջը իր նոր հարս կինը աղջիկ
մը կը ծնի, եւ տղաբերքի ցաւոյն չդիմանալով կը մեռ-
նի, եւ կը տանին ու կը թաղեն իր հօրը քով : Իմա այս
տղայն ալ անկին մնաց, ինչպէս որ իր մայրը այրի մը
նայեր էր, եւ չուզեց նորէն ամուսնանալ, եւ իր բա-
լոր ջանքը եւ առ Վստուած ունեցած մաղթանքը աս էր
որ իր մէկ հասիկ աղջիկը ապրի, եւ ինքն ալ անով ու-
րախանայ : Երբ աղջիկը Վստուծոյ շնորհօքը Թ տա-

րեկան եղաւ, տղուն մայրը ինկաւ մեռաւ, եւ աղջիկն
 ու հայրիկը մինակ մնացին: Աղջկան հայրը որովհե-
 տեւ վաճառական էր, պէտք եղաւ որ վաճառականու-
 թեան պատճառաւ հեռու երկիր մը երթայ, բայց դժ-
 ուար կէտը հոս էր, որ իր մատաղ աղջիկը որու ձգէ,
 ինչ քնէ. անձար մնացած, խորհեցաւ սրբակրօն եւ
 հաւատարիմ անձի մը յանձնելու, ուստի առ երեւոյ-
 թքս՝ խոհեմ եւ սրբաբարոյ գիտուն մը կար. որ աշ-
 խարհքէն ձեռք քաշած կերեւար, զոր բոլոր մարդիկ կը
 պատուէին եւ կը մեծարէին, չգիտնալով որ՝ վարպե-
 տորդի կեղծաւոր մըն էր, ըստ առածին թէ «*Ինսանըն
 սօփուսս՝ շէնանըն ճասգարուսը*»:

Այս խոհեմ կեղծաւորը՝ որովհետեւ Աբլօրին գը-
 րացիներն է, իր տունը կանչեց, եւ իր անմեղ աղջիկը
 յանձնեց նոյն խարեբայ կեղծաւորին ըսելով, տես
 եղբայր, հրամանոցդ համբաւը աղէկ լսեր եմ, եւ
 գիտեմ որ խելացի ես, չարն ու բարին՝ բաց 'ի բնական
 իրաւանց, գիտութեամբ գրոց ալ սորվեր ես եւ կը
 ճանչնաս. ուստի այս մէկ հատիկ աղջիկս նախ Աստու-
 ծոյ, եւ ապա քեզի կը յանձնեմ, որ լաւ ու անարատ
 պահես, մինչեւ որ ես վերադառնամ. քանզի դուն
 մեր գրացիներն ես, եւ քեզմէ ալ արժանաւոր եւ հա-
 ւատարիմ մարդ չգտայ: Ար խնդրեմ որ հարկաւոր ե-
 դած ուտելիքը եւ հացը առնես եւ դանէն ներս ձգես:

ու դուրսէն ալ այս տանը պահապան ըլլաս, որ չըլլայ
 թէ գէշմարդ մը կամ գէշխորհուրդ մը դունէն ներս
 մտնայ. միայն դուն ըլլաս խնամատարը եւ դարմա-
 նողը. քանզի հետս տանիլ խիստ դժուար կըլլայ.
 Այս խօսքերը որ լըսեց խոհեմ կեղծաւորը, շատ ա-
 դէկ ըսաւ ու յանձնառու եղաւ շուտ մը, բայց աղջը-
 կան երեսը չտեսաւ թէ ինչպէս մէկն է, բայց ինչ որ
 ծախք ընէր, աղջկան հայրը կրկնապատիկը պիտի հա-
 տուցանէր ու ընծայ ալ պիտի բերէր. Այս բանե-
 րուն համար մինչեւ անգամ աղջկան հայրը միամտա-
 կան գիր մըն ալ տուաւ խոհեմ կեղծաւորին. Հիմա
 այս տեղ խոհեմը շատ ձարտար մարդ ըլլալով՝ աղջը-
 կան հօրը սա հետեւեալ պատմութիւնը կընէ, հաս-
 կըցընել ուզելով թէ ես այնպէս չեմ. վասն որոյ սկսաւ
 պատմել, մտիկ ըրէ Աղայ, մտիկ ըրէ, ըսելով.

Խամանակով աղքատ ու խեղճ մարդուն մէկը իր
 ընտանիքը կը ձգէ եւ կու գայ այս երկիրս ստակ
 շահելու. աղբ թափելով հինգ տարուան մէջ 500
 դուրուշ կը շահի. ինքն իրեն կը խորհի որ եթէ երկու
 տարի ալ կենայ նէ՝ 700 դուրուշի տէր կըլլայ. ու
 հայրենիքը կը վերադառնայ մինչեւ մահ նոյն գումա-
 րը բաւական սեպելով. բայց ձեռքի ստակը գողցունե-
 լու վախէն խորհեցաւ որ հաւատարիմ մարդու մը
 յանձնէ. Աւստի խորհեցաւ որ իր ստակը տանի դա-

տաւորին յանձնէ, քանզի կարդացող մարդ ըլլալով
մէկուն անիրաւութիւն չընէր . այս խորհրդով յա-
փըշտակուած՝ գնաց դատաւորին ըսաւ . Տէր իմ, սա
ստակս թող հրամանոցդ քովը մնայ, ես վարձք չեմ ու-
ղեր . մտածեցի որ հրամանքդ աւելի հաւատարիմ մարդ
չկայ, անոր համար քեզի բերի որ սրահես ստակս մինչեւ
իմ հայրենիքս (սիլա) երթալու ատենս : Պատաւորը
ըսաւ . շատ աղէկ խորհեր ես . ինձմէ հաւատարիմ մարդ
ո՞վ պիտի գտնէիր , երբոր պէտք ըլլայնէ՝ եկուր առ
ստակդ ու գնայ : Աղքատը ստակը հոն ձգելով միա-
մտաբար , դարձաւ նորէն աշխատելու : Այս միջոցին
իր հայրենակիցներէն քսան հողիի չափ հայրենիք եր-
թալու պատրաստութիւն կընեն . որ մը աս աղքատին
հանդիպելով՝ կըրօտիպեն որ իրենց ընկերանայ , ըսե-
լով թէ Աստուած մարդս անօթի չձգեր , ինչ որ վաս-
տակեցար նէ , բաւական է . ըստ ասածին թէ « Աւան
ինանը ետրաթոր ըլլածորա՝ հրսմիկնի տէ պերապէր վերջնորեւ » :
Այս տեսակ համոզիչ խօսքերով աղքատին սիրտը
թաւնա ելաւ . եւ որոշեց որ երթայ՝ յիշելով այն
առածը թէ « Ստորակնիկէ ինձանքն եօճիւն շխարհորիւր » :
Աւստի խօսք տուաւ որ իրենց հետ երթայ , եւ կա-
րաւանն ալ ձամբայ ելլելու հինգ վեց օր մնացեր էր ,
գնաց դատաւորին ըսաւ որ՝ Տէր իմ, յիրաւի երկու
տարի ալ պիտի մնայի , բայց ինչ ընեմ . քաղաքացի-

ներս պիտի երթան , ես ալ անոնցմէ չկրնալով բաժ-
 նուիլ , ստիպուեցայ երթալ , ուստի կը խնդրեմ որ իմ
 ստակս տար , ես ձեր հրամանոցը ազօթող եմ , որ այս
 աղէկութիւնը ինձի ըրիք : Պատաւորը մէկէն բար-
 կութեամբ լեցուած ըսաւ , ո՛վ մարդ , ի՞նչ կը զրու-
 ցես , դուն խնդեցեր ես , դուն չէօթի՞ւ մը , ես մէկ
 դատաւոր մը , դուն ինձի հետ ի՞նչ յարաբերութիւն
 ունիս որ ինձմէն անելիք կուենաս : Կորիք դուրս
 հիմա քեզ ծեծին տակ մեռցունել կուտամ , այս
 խօսքը իմ պատուոյս դէմ է , թէ որ մէյ մ'ալ
 դուռս ոտք կոխես նէ , մահդ ինձմէ կը գտնես : Աւս-
 տի իր ծառաներուն հրաման ըրաւ որ խեղճ մարդը
 դուրս վանան . ծառաներն , որ հոն կայներ էին , ան-
 միջապէս վրան յարձակեցան , գլխուն , քիթին , բեր-
 նին եւ կուն ըկին դարկին , հրեցին , հրմարկեցին , խեղ-
 ճին սիրտը հրով մրկեցին եւ գոնէն դուրս ձգելով
 վոքնտեցին : Հիմա խեղճ աղքատը ասի 'ի բերան ըլ-
 լալով ինչ ընելիքը կորսնցուց . աչքերը մթնցած ,
 ձամբաւ մոլորած սրտին կսկիծէն ոտքը յառաջ չէր
 երթար , երկու ձեռքերը գլխուն գարնելով լեզուն
 բռնուած , աւաղ իմ աշխատութեանս ըսելով կուլար
 եւ կողբար . բայց ինչ օգուտ , ըստ առածին թէ՛
 « Սո՛ն ի՛նչմանլլէ ա՛գճէ էլնէդ » :

(Ի՞նչ կրսեմ ո՛վ ընթերցող , խոհեմը այս պատ-

մուծիւնը ըրած ատեն՝ աղջկան հայրը ուշի ուշով
 մըտիկ կընէր, երբ բանը հոս եկաւ, մտիկ ըլիք ըսե-
 լով կըրաստիպէր). հիմա ըսաւ, աս խեղճ աղքատը տեսաւ,
 որ ստակը առնելու յոյս չկայ, գնաց իր սենեակը եւ
 ստակը առնելու չձարը կը մտածէր, եւ առ Վստուած
 ապա ինելով կըրսէր ալ թէ Վստուած մեծ է, կը յու-
 սամ որ իմ ստակս օր մը անիրաւ դատաւորին ձեռքէն
 հանէ՝ ըստ առածին թէ. « Կե՛հ Կե՛ղ Կե՛ղ Կե՛ղ, Կե՛ղ Կե՛ղ Կե՛ղ Կե՛ղ »:

Ետեւեալ օրը խեղճ աղքատը յոյսը կտրած՝ իր
 առջի սակառը կանակը առնելով՝ գնաց չէօփ թափել-
 Երբ « Զէօփ շէօփ Կե՛ղ Կե՛ղ » ըսելով տան մը առջեւէն
 կանցնէր, ներս կանչեցին. խեղճ չէօփին սակառը
 լեցուցած ատեն ստակին կսկիծը միտքը ի յնալով՝
 ո՛հ, վա՛հ ըսելով կը հառաչէր: Տիկինը վերէն աս
 կսկծալից ձայնը լսածին պէս, եկաւ, աղքատին ը-
 սաւ թէ. « մի դու. ի՞նչ եղեր է քեզի, ցաւդ ի՞նչ է,
 որ այսպէս կը հառաչես. ըսէ ինձի, քու ցաւդ ես կը
 փարատեմ: Մի տիկին, ըսաւ աղքատը. իմ ցաւս եւ
 իմ կրակս անմարելի է, դուն չես կրնար օգնել. ես՝
 ըսաւ, մէկ դատաւորի քով 500 դուրուշ աւանդ (է-
 մանէթ) ձգեր էի երկու ամիս յառաջ. հիմա իմ եր-
 կրացիներս հայրենիք կերթան. ես ալ ուղեցի հետեր-
 նին երթալ, ուստի դացի ստակս ուղել, ըսոյց դատա-
 ւորը ու բացաւ, եւ իս ծեծելով վանտեց, ասոր համար

Տիմա կերիմ եւ օ՛ֆ կընեմ, որ մինչեւ հինգ տարի
 ալ աշխատելու եմ նոյնչափ ստակ շահելու համար,
 ո՛վ գիտէ, կապրիմ, թէ կը մեռնիմ մինչեւ ան տ-
 անը: Տիկինը ըսաւ, դուն հոգ մի ըներ, վաղ առա-
 լօտ կանուխ հոս եկուր, ես ստակներդ դատաւորէն
 կըփրցունեմ, չե՞ս գիտեր այն առածը, որ կըսուի.
 «Վշտ ելրէն իտարիան որից, որչա շէքընճա»:

Այս խօսքը աղքատը լսելով՝ սիրտը քիչ մը մտի-
 թարուեցիւն գտաւ, բայց ասով ալ դարձեալ սիրտը
 հանդիստ չէր, ըստ առածին թէ՛ «Վարընն սալը սա-
 ղան, սէլը քըսա», ինչիւ իցէ նոյն դիշերը խեղճ աղ-
 քատը մինչեւ լոյս մամտութիւն անցուց, եւ ման հար-
 ցունողին ալ բերանը չէր բացուեր, որ պատասխան
 տայ, ըսելով այն առածը թէ, «Վայրելը որչա
 տեհալէի հարամ»:

Վերջապէս առաւօտուն կանուխ տիկնոջը տունը
 գնաց. Տիկինը ըսաւ որ քիչ մը վարը սպասէ, մինչեւ
 որ ինքը պատրաստուի: Տիկինը՝ մինչեւ յիտուն հա-
 զարի արժէք ունեցող անգամանդեայ եւ յանկիւնեայ
 մատանիներ եւ ուրիշ կանացի ծանրագին զարդեր կ՛ծիկ
 մը ըրած հետը առաւ, եւ իր ազախինն ալ մէկտեղ ըլ-
 լալով երեքը մեկէն ճամբայ ելան: Արդոր դատա-
 ւորին դուռը մօտեցան, Տիկինը աղքատին պատուի-
 րեց որ, ես ներս դատաւորին քովը կը մանեմ, դուն

ալ կէս ժամէն վերջը եկուր՝ դատաւորէն ստակդ
 ուղէ . եւ աղախինին ալ պատուիրեց որ երբոր աղքատը
 ստակը առած դուրս ելլէ նէ , դուն ալ եկուր դա-
 տաւորին առջեւ ը ինձի աւետիս տուր ըսելով թէ . աշ-
 քող լ'յս Տիկին , աղաղ հիմա եկաւ : Տիկինը մինակ
 ներս մտաւ , դատաւորը բարեւելէն ետեւ զարգարուն
 բազմոցի մը վրայ նստաւ : դատաւորը ըսաւ , բարի լի-
 ջի դալուսաղ Տիկին . ի՞նչ խորհուրդ ունիս . կամ ի՞նչ
 դատ ունիս , հրամսէ ըսէ . Տիկինը ըսաւ . ծառայեմ ,
 Տէր դատաւոր . դիտեմ որ հրամանքդ արգարադործ
 մարդ ես , աղախինդ սրամբի կին եմ . այրս վեց տարի
 է որ դիս ձդած Աղիպտոս գնաց . այնքան ժամանակին
 մէջ դիր կամ լուր չէր գար , միայն թէ անցեալ ամիս
 դիր մը եկաւ , որուն մէջ կըսէ որ անպատճառ ամեն
 բանս ձգեմ , ու ելլեմ հոն ելլեմ . քանզի հոն իր
 դործը յաջողերէ , ալ հաս պիտի չկրնայ գալու Աւասի
 որոշեցի երթալ . բայց 50,000 դուրու շի չափ ծանրա-
 դին բաներ ունիմ , հետս տանելու կը վախնամ , որ
 չըլլայ թէ դողերուն կերցունեմ . վասնորայ մտածեցի
 որ ձեր քովը պահ ձգեմ աղէկ զխոնալով որ դուք
 մարդու անիրաւութիւն չէք ընէր . հիմա առնք հրա-
 մանոցդ քով աւանդ թող մնայ , ես կերթամ . թէ որ
 ողջ մնացի ու աս երկիրը դարձայ , ապրանքը իմս է ,
 իսկ թէ որ մեռայեկամ հոն մնացի , քեզի ըլլայ , ինչ-

պէս կըսուի այն առած թէ՛ «Պատմութիւն» կեղծ հեղա-
 սյունն, «Պատմութիւն» ըստ սրտով հաճեցաւ տիկնոջը
 խօսքին, եւ ըսաւ շատ աղէկ խորհեր ես. . . յանկարծ
 չեօփնի աղքատը ներս մտաւ ու իր 500 դուրուշը դա-
 տաւորէն սահանջեց ըսելով թէ իմ ստակս տուր հայ-
 րենիք պիտի երթամ: Պատմութիւն ահամայ դանձապե-
 տին հրաման ըրաւ որ աղքատին 500 դուրուշը տայ,
 որ չըլլայ թէ կնիկը չիօթի. աղքատը իր ստակը առաւ
 եւ նոր ախարհք եկածի պէս խնդարով դուրս ելաւ:
 Հիմա դատարարը կը պարծենար Տիկնոջը առջեւ թէ
 տես՛ք, Տիկին, ես ինչ հաւատարիմ եմ. այն աղ-
 քատը որ տեսար, երկու ամիս առաջ 500 դուրուշ ին-
 ծի աւանդ ձգած էր, հիմա որ ուղեց, ամբողջապէս
 տուի, հրամանքդ ալ որ դաս ուղես, մէկէն կը հա-
 նեմ կուտամ. (աղջկան հայրը մեծ ուշադրութեամբ
 մտիկ կընէր): Հիմա աս խօսքը, որ դատարարը կը-
 սէր, դեռ Տիկինը կ՛ըսէր դատարարին յանձնած չէր,
 դուրսէն աղախինը՝ աղքատին ուրախութեամբ դուրս
 ելլելը տեսնելով՝ ըստ հրամանի Տիկնոջը ներս մը-
 տաւ, դատարարին առջեւ իր տիկնոջը աւետիս տը-
 ւաւ ըսելով թէ՛ Տիկին, մեծ աւետիս քեզ, ահա
 Աղադ Աշխատուէն եկաւ, շուտ ըրէ, եկուր, քեզ
 կուղէ. դատարարը աս խօսքը լսածին պէս դարմացմամբ
 բռնուեցաւ, իսկ Տիկինը իր կ՛ըսէր ծոցը դրած ե-

լաւ, կանգնեցաւ եւ սկսեց դատարանին մէջ կարաւել
 եւ խաղալ: Դատաւորը տեսաւ որ աս բանին մէջ վար-
 պետութիւն կայ, ինքն ալ ելաւ, թեւերը վեր առ-
 նելով սկսեց կնկան առջեւը խաղալ: Տիկինը հարցուց
 թէ Տէր իմ, ես կըխաղամ որովհետեւ այս դուրսէն
 եկեր է. իսկ դուն ի՞նչ ուրախութիւն ունիս որ ելեր
 կըխաղաս. դատաւորը ըսաւ աս խօսքը, որ հիմա ա-
 ռածներու կարգ անցեր է. «Պէն քեզ եւստի քարը
 ետի՛մ, լուծել քա՛ն կեօքե՛տի՛մ»:

Այս հնարքով Տիկինը խայտառակեց անիրաւ դա-
 տաւորը, եւ աղքատին ստակը առնել տուաւ, որ գը-
 նաց իր հայրենիքը, Հիմա խոհեմը պատմութիւնը
 որ աս տեղս հասուց, ըսաւ. Աղայ, հրամանքդ որ այս
 պատմութիւնը լսեցիր, գիտցիր որ «Այժմեթի եւ յանեթ-
 վէ օլճալ» : Այժմէ մարգս շարու թեամբ վարուի, հար-
 կաւ վերջը կըխայտառակուի, եւ կը պատժուի. ծա-
 ռադ քու աղջիկդ կըպահպանեմ. եւ իրերեւ հայր ամե-
 նայն սրբութեամբ կըխնամեմ, դուն հոգ մի ըներ:
 Աղջկան հայրը միամտաբար այս խօսքերէն բռնուելով
 աղջիկը անոր հոգատարութեանը յանձնեց, եւ ճա-
 նապարհի պատրաստութիւն տեսնելով ձին հեծաւ իր
 ծառային հետ մէկ տեղ, արցունք թափելով ճամբայ
 ելաւ եւ այսպէս իր մէկ հատիկ աղջիկէն բաժնուեցաւ:
 Եւ այց հիմա տես այս ինչպէ՛ս կ'աղջկան վիճակը եւ դիպ

ուածները, որ ինչ ցաւեր եւ վիշտեր պիտի քաշէ
 չար խոհեմին ձեռքէն, եւ ինչ համբերութեան գործ-
 քեր պիտի ցոյց տայ, քանզի Նստուած շիտակին հետ
 է եւ ամեն բան կը տեսնէ ըստ առածին թէ՛՛) արա քա-
 ընճանճն քարա խոշ Էդերինոն Կեղեցին Կեօրէ-ր Բապայ,՝

Հիմա այս խոհեմը սկսեց իր մտացը մէջ չար սերմեր
 ցանել եւ դարձանել, որ բուսնին եւ պտուղներ տան
 ՚ի ցնծութիւն եւ ՚ի բերկրութի ն Սաղայէլի: Ամեն
 առաւօտ եւ երեկոյ այս չար խոհեմը աղջկան դուռը
 հանդիպելով՝ պէտք եղած բաները կառնէր եւ դռնէն
 ներս կը ձգէր կերթար, բայց միտքը միշտ չարութեան
 մէջ ըլլալով՝ երկիւղն ու ամսթը սրտէն վերցնէր էր.
 Կուզէր որ մտքին մէջ եղածները գործքով ալ կատա-
 րէ: Այրբ դուռը կերթար, կսկսէր տնտնալ, կամ ներս
 մտնել եւ պատճառանօք խօսքը երկարել. թէպէտ աղ-
 ջիկը ինքզինքը բնաւ չէր ցուցըններ, սակայն անի տն-
 վայել խօսքերով կը ծիծաղէր, որ աղջիկը միտքը իմա-
 նալով բացուի եւ սիրտ տայ: Իսկ աղջիկը չլսելու
 զարնելով եւ պատասխան չտալով կը համբերէր, մին-
 չեւ որ աղէկ մը իմացաւ թէ մարդուն միտքը չար է.
 վասն որոյ մէյ մ'ալ՝ Լկաւ նէ, դուռը չբացաւ, ներ-
 սէն ալ ձայն տուաւ որ ալ դռան քով չգայ, ինծի
 պէտք եղած բաները ուրիշին բերել կուտամ ըսե-
 լով վստեց: Խոհեմը դարձաւ իր տունը եւ ոխ

պահելով ձկսեց զանազան չարիքներ դիզել աղջկանը
 գլխուն ըստ առածին թէ «Սա աշուար, փաշման ա-
 յաճաղ, եւ այն առածին համեմատ ՚ի դորձ դնել
 կը փուլթար թէ «Սաքը սաճան ալ իւր՝դուն սաքը սաւար
 եկօրի-իւն, » :

Ե՛րեսնուհետեւ խոհեմին ջանքն էր աղջիկը որոգայ-
 թի մը մէջ ձգել. բայց աղջիկը մինչեւ չորս տարի այն
 չարը իր տունը չհանդպցուց. իր պիտոյքը կէս մը
 կարօտութեամբ, եւ կէս մը դռան առաջէն անցնող
 սախըճիներէն առնելով կապրէր. եւ պառաւանց հետ
 ալ բաղնիք չերթալով՝ տունը կը լուացուէր. եւ ինք-
 ղինքը Եստուծոյ յանձնած էր՝ ըստ առածին թէ,
 «Եւզրոս քուշոան Եոզաարնը Եօփան Եւան օրը, » :

Չորս տարիէն վերջը, աւետարեք մը եկաւ շար խո-
 հեմին՝ նամակ մըն ալ ձեռքը բռնած ըսելով թէ աչքդ
 լոյս, աղջկան հայրը Ե. քլօր եղբայրը երկու օրէն պի-
 տի գայ. Չար խոհեմին զրկուած նամակին օրինակը.

«Մարութ մարբաղանաւ փայլեալ աղնիւ եւ հաւա-
 տարիմ սիրեցելոյդ խմոյ, եւ իմ իսկ հաւասար հոգւոյ
 բարեկամիդ մտերմի առն խոհեմի, քաջանուն երջան-
 կի անպատում բերկրութեամբ սէր եւ ողջոյն :

«Իմ աղջկանս նկատմամբ ձեր կրած չորս տարուան
 աշխատութեանը տեղեակ ըլլալով՝ մեծապէս շնորհա-

կալ եմ, եւ կը յուսամ որ՝ չէ թէ միայն անոր պակ-
սութիւնները հոգացիր, այլ ամեն կերպով զանի պահ-
պանեցիր. ուստի իմ ողջամբ հոգ հասած ժամանակս
պիտի փութամ պարգեւներով եւ պատուով ձեզի հա-
տուցումն ընել՝:

Միամ երախտապարտ եւ բարեմտութեւ մասն ձեր
անգին կենաց՝:

Ք սիրտանս սրբի հօր դպրեր:

Չար խոհեմը այս նամակը կարդալով շատ ուրախա-
ցաւ, որովհետեւ պատեհութիւն գտաւ ամեն շարու-
թիւն ի դարձ դնելու. ահա հիմա է ժամանակը՝ ըսաւ.
տես ինչեր պիտի բերեմ իս լինտող աղջկան դիտուն:
Ընթերցող, տես այս դարչելի մարդուն գէշութիւնը՝
որ անիրաւ տեղը անմեղ աղջկան դու խրի՞նչ փորձանք-
ներու պիտի հանդպցունէ, երբէք այն առածը միտքը
չբերելով թէ «Ղոտոս Բաղարամ, պօյուննա Բաղ.
դերա եւ Իննն Բաղուն, Բենտին տիւրքան տե՛ղլէր»:

Երգ՝ աւետարեցիին պարգեւ տալով հրաման բրաւ
որ գործը քիչ մը նստի, մինչեւ որ նամակին պատաս-
խանը գրէ: Ընթերցող, ի՞նչ կըսես. հիմա հրաշքի
ատեն չէ՞ մի. մէկէն աս մարդուն մատները կոտրաի,
եւ աչքերը կուրնայ նէ, իրաւունք չէ՞ մի որ կարող

ջրը անմեղ աղջկան մը արիւնք մանելու : Խեղճ
 աղջիկը այս նամակէն անտեղեակ էր . միայն թէ դուր-
 սի տարածայնու թիւններէն իմացեր էր որ՝ քիչ օրէն իր
 հայրը պիտի գայ . ուստի այնպէս ուրախու թեամբ լե-
 ցուեր էր որ , բոլոր քաջած մինակու թիւնը եւ խեղ-
 ճու թիւնը մտնցած , ուրախու թենէն կուլար , եւ եր-
 բեմն ալ խենդի պէս տանը մէջ ասդին անդին ցատկելով
 կը խնդար , եւ ահանջն ալ դուռն էր թէ երբ պիտի գայ
 հայրը . (խեղճ աղջիկը չէր գիտեր թէ ինչ սեւ օրեր
 պիտի գայ գլխուն) . այս կերպով՝ կէս մը արտում եւ
 կէս մը արտած երեսով կը սպասէր հօրը գալուն :
 Իսկ շարխոհեմը իր գրեչը կոյս աղջկան արեանը թամ-
 խելով՝ նստէր աղջկան գլխուն բարուրանք կը դիզէր
 եւ սեւ զրպարտութիւններ կը նիւթէր . աղջկան
 հօրը այսպէս գրելով :

Քաջատոհմ աղնուական վաճառականի յարգի
 բարեկամի եւ սրբասիրի ինէն ողջոյն :

«Ձեր մերձակայ գալստեան սիրալիր նամակը ըն-
 դունելով գովեցի ձեր խոհեմութիւնը , որ քաջ ճանա-
 չելով ձեր աղջկան նկատմամբ իմ չորս տարու անկրած
 բաղմարդիւն աշխատութեանս արժէքը , եւ այն ալ
 հեռուէն ձեր մտքին նուրբ եւ խորազննին դիտակովը

առնելով շնորհակալ եղեր էիք, ըստ հին առածին
Թէ « Իշև աշուղ էնէ տէրջնտէն շինարարանը «էջէ-
տէր » :

Նայէս եւ ձեր մեծապատուութիւնը ուշիմ նկատ-
մամբ հեռուէն տեսած էք իմ կրած նեղութիւնս եւ
իմ աշխատակրական պահպանութիւնս, որոյ համար
մեծ պատիւ եւ հատուցում խոստացեր էք, որ արդա-
րութեան գործ է : Նորդ՝ ու ազնիւ, Ն. Ղայ. բազում խո-
հականութեամբ եւ քաջ դատողութեամբ միտք դիր իմ
ըսածներուս : Նստուած հետի արասցէ, ձեր ասկէ
բաժնուած օրէն մինչեւ ցոյսօր քու աղջիկդ ինչ խոյ-
տառակութիւններ չգործեց, անակ որ ձեր անուանը
եւ առհին անպատուութիւն բերաւ իր անպատմելի
խոյտառակութեամբ : Եայտնապէս լիտի եւ անառակ
անձանց հետ նստելով պոռնկական մեղօք լեցուաց
տունդ, եւ այժմ տունդ անուանի պոռնկանոցմը դար-
ձաց է, ու եթէ բրածները մի ըստ միօջէ գրէլ հարկ
ըլլայ, մեծամեծ մատեաններ կը լինայ, զորն ասեմ,
զորն պատմեմ : Ըստ անգամ խրատեցի, բայց ոչ
երբէք ինձի մըսիկ ըրաւ : Միչեւ անգամ իստուեն
գործս վնասեց : Աւտի խոհեմութիւն սեպեցի սպա-
սել, որ բանը եղածին պէս ձեզի պատմեմ, որ դուք
ձեր պատուոյն վայելածին պէս ըրէք : Եթէ ինձի հար-
ցունէք նէ, այսպիսի ոյն կեանքը վերցունել օրինաւոր

է . որպէս զի թէ ձեր տոհմին անուէր սրբուի , եւ թէ
այլոց գայթակղութեան պատճառ չլլայ . ահա իմ
հարազատ եւ սուրբ պարտաւորութիւնս կատարելով
նամակս կը կնքեմ եւ կը ղ կեմ , , ,

Մնամ ՚ի խնամս ձեր պահպանեալ , որ այր խո-
հեմ առ ձայնիմ :

Նամակը կնքելով տուաւ աւետարեւրին որ շուտով
տանի աղջկան հօրը հացուէ . աղջկան հայրը՝ նա-
մակը կարդալուն պէս յանկարծակիի եկած , խելքը
գլխէն գացած , աչքերը մթնցած , եթէ ծառայն հաս-
նելով թուրրձեռքէն չառնէր , ինքզինքը պիտի ըս-
պաննէր : Ծառայն որ պատճառը հարցուց . ըսաւ ,
տղայ . ՚ի՛նչ կը հարցունես , տուես փչեր է , ես չեմ
խնայեր . առ սա նամակը եւ կարդաւ . երբ ծառայն նա-
մակը կարդաց , ափ ՚ի բերան եղաւ մնաց . . . եւ սկսեց
իր տիրոջը սիրտը առնելու համար խրատ առլ , բայց
ի՛նչ օգուտ . սիրտը այնպէս մտած էր որ՝ կարգեր իր
աղջիկը մեղսուելի քստ առածին թէ , « Գիր + Երկնի-
նի » + Եւ Են՝ ըրաւր ըր » : Եւ կամ թէ « Գիր Էր
Երբու-ճաղըն » , ախր հիմոյի ելլէ եկիր . . .

Աստի հրաման քրաւ ծառային որ երթայ իր աղջիկը
աղանէ , եւ իբրեւ շուն շարիկը այիւնը թաթիւն եւ
բերէ իրեն : Իւրեղծ ծառայն սուկալով ճամբայ ելաւ .
դնաց տուն . աղջիկը ծառայն անուայուն պէս ուրա-

Բա՛նաւ զի՛նք ինչ ընկել չէր գիտեր . ուրախ գուարժած ծա-
 սային գէտ վազեց՝ առանց գիտնալու թէ գիտուն ինչ
 ձիւն պիտի գար . Զմա ծառայն ինչ ընկել չէր գի-
 տեր . քանզի աղջիկը՝ անմեղ կերուեսք . եւ խոհեմին
 գրածէն ալ երբէք տեղեկութիւն չուներ . Աւտի
 ծասայն շուարած կեցեր էր , եւ չէր գիտեր թէ ինչ
 կերպով սպաննէ , վասն որոյ առիթ բերանը աղջիկէն
 ծածկելով , հրամմէ ֆեւաճէգ հագիր ըսու հայրդ
 մօտ տեղերս է , քեզ անոր տանիս՝ աղջիկը եւս ա-
 նա ել խնդալով մի ամտաբար առջեւը ինկաւ , եւ եր-
 կուքը մեկտեղ լեռնէ ինչ գօցին . Զիսա ծառայն՝
 աղջիկը սպաննելու համար յարմար տեղ մը կը փըն-
 տըռէր , որ արիւնաթաթաթա շապիկը անէ հօրը տա-
 նի . այս խորհրդով ասդին անգին կը անտնար , աղ-
 ջիկը իմացաւ որ ծառային միտքը բան մը կայ . ուստի
 լալով կաղաչէր թէ Կոտաճոյ սիրոյն բլլայ , ինչու
 այնչափ կը մամասս , ըսէ ինձի . ծառայն մեկեկն աչքը
 երկինքը վերցուց եւ Կոտաճոյ ապա ինկելով՝ անմեղ
 աղջիկը շրտպաննելը կամ աղատելը վարձք եւ արդա-
 բուցութիւն սեպելով , սկսեց աղջկանը լալով ըսել թէ
 սի՛ր . Ի՞նչ ըսեմ ինտո՛ր ըսեմ . հայրդ գիտ
 զրկեց որ դամ քեզ սպաննեմ եւ շապիկդ արիւնք
 թաթիսելով ինչան վկայութեան հօրդ տանիս՝ որ
 ապա ելլէ անն գայ , եթէ քեզ չսպաննեմ . հայրդ

գիտ կըստպաննէ թայց ես քեզ սպաննելու միտք չու-
նիմ , ըստ առածին թէ « Եւեթ ճեւար Լաւը , պէն ճ
Գալըն Եւանգել . »

Նկար , քեզ այս լեռները ձգեմ , թայց իմ բա-
րութիւնս չմտնաս , միայն թէ շապիկդ հանէ ինծի
տուր , որ մէկ ոչխարի արիւն թաթխեմ , ահա ըստան-
նէցի , ըսելով տանիմ հօրդ տամ , եւ դու լեռնէ լեռ
պտըտելով կերթաս , քաղաք մը կը մտնաս , դուն
գիտես . եթէ յանձանք չունիս նէ , 'ի հարկէ Լու-
տուած դքեզ այս անմարդարնակ տեղերէն կազատէ .
Թայց քեզի կը պատուիրեմ որ հօրդ երկիրը շղաս .
որ չ'ըսայ թէ քեզ սպաննէ , ես քեզի այսքան աղե-
կութիւն կրնամ բնել , որ քեզ չսպաննեմ . դու ալ
յոյսդ Լուտուածոյ տալով , Լուտուած քեզի կողորմի .
Եղջկը՝ այս թօսերը ծառայէն լսելով , բոլոր ուրա-
խութիւնը տրոմուեալան դսրցած՝ կսկծալից սրտիւ .
աղեկսկից ողբով աչքը արիւն արցունք լեցուած այն
լեռան մէջ Լուտուածէ ողորմութիւն կը խնդրէր .
Ա երջը միտքը գալով աղջիկը հարցուց ծառային թէ ,
եղբայր , կաղաջեմ , ըսէ ինծի , ի՞նչ էլ իմ յանցաբա-
ն'ը հայրս իս մեացունել ուղեց . ծառայն խոհեմ մար-
դուն զրկած զրպարտական նամակին իմաստները մի-
ըստմիջոց յայտնեց , ահա ասոնց համար էր որ հայրդ
քեզ սպաննել ուղեց . ուստի ճշմարիտը կամ սուտը

չեմ գիտէր . մի այն թէ այս առածը կսեմ որ «Աւ-
լան ինչ եանքնս . գաղտնի ինչ եանքնս .» :

Աստուած թող դատէ այն մարդը , ինչ որ է նէ ,
աղջիկը՝ շապիկը հանեց ծառային տուաւ , ու հրաժա-
րակ սն ողջոյնը տուաւ իրարմէ դատուեցան : Իսկ
աղջիկը՝ հիմա միևակ մնալով՝ իր ամէն ուրախութիւն-
ները սուգի փոխուած , աչքէն հեղեղի պէս արցունք
թափելով ա՛յս կընէր , կուլար ու կը պտըտեր ըսելով
թէ ալ հօրս տունը պիտի չտեսնեմ . անանկ որ՝ հառա-
չած ատենը՝ ապառաժ քարերը անգամ կը լացընէր :
Մանաւանդ երբ ուտելու բան մը չունենալը միտքը
կիյնար նէ , ո՛վ Աստուած , արդեօք անօճի՞ պիտի
մեռնիմ ըսելով՝ վախու՛ն խելքը ցնորած՝ կիսամեռ աս-
դին անդին կը պտըտէր , նա մանաւանդ երբ գաղան-
ներուն վախը միտքը կը բերէր , կ'ըսէր , ո՛վ Աս-
տուած իմ եւ հէր . այս ի՞նչ վիշտ է , որ դիս պաշա-
րեց . ես քեզի եմ ապաւիներ , դուն օղնէ ինձի .
եւ այն իրեն չարութիւն ընողին համար ալ երբէք գէշ
չեր խօսեր , եւ չեր անխօսեր , յիշելով այն առածը

Եւ իյէ եւ իկ հէր առեմ իշի ,
Քէ լիւի եւ իկ՝ եր ատեմ իշի .

Աղջիկը ասանկ խեղճ ու լալի վիճակի մէջ թող
մնայ , ետքը կը պատմէնք . դանք հի՛այ ծառային :

ճառայն՝ աղջկան շապիկը ոչխարի արիւնի մէջ թաթ-
 խելով՝ տարաւ իր Աղային . ան տանը ելաւ ու ե-
 կաւ իր տունը : Չար խոհեմը՝ մէկ քանի սուտ մկա-
 ներ հետը առնելով գնաց գիմ աւորելու , եւ բարեւեր-
 քու . աղջկան հայրն ալ դանի հաւատիմ բարեկամ
 համարած ըլլալով՝ սիրով բարեւը առաւ եւ շատ մե-
 ծարանքներ ցոցող չար խոհեմին , եւ շատ ալ շնորհա-
 կալ կըլլար թէ աղջկանս շարունակներ չձածկելով՝
 գիտ կեդաւնունէ ազատեցիր . աղջիկս մեռաւ նէ ալ իմ
 բարի համբաւս չմեռաւ ըսելով , իրենց ուրախութիւ-
 նը կը նայէին : Այս կերպով գիշեր ցորեկ մեկտեղ կե-
 նալով միշտ ուրախութիւն կընէին , խոհեմը երբէք
 չէր յիշեր այն առածը , որ կըսուի թէ , « Եւե-
 դադըն թե՛նքէ ե-՛թոր յարեա՛ն եամար . . . Ետնք թող ու-
 րախութիւննին ընեն . ընձեքցող , աղջկան հօրը
 յանցանք մի գաներ , քան զի հին առած է , որ կըս-
 ուի թէ , « Եւամարա՛ն կեցե՛ր թե՛նք Էրեւե՛ր » :

Աւտի մերք գանք հիմայ լեռան մէջ միմակ մնա-
 ցող խղճ ալի աղջկան միմակը տեսնելու . խեղճ աղ-
 ջիկը անմխիթար ցաւով կուլար եւ կը պարտէր՝ ա-
 ռանց գիտնալու թէ ուր կերթար . երբեմն երբեմն
 մրան մարդիք գալով՝ մինչեւ մէկ տարի առանց մար-
 գու մը հանդիպելու հեծելով եւ ողբալով կերթար :
 Այլ ալ լաթերը պատուէր , եւ աղան ու ողիւր զինքը

պաշարեր էին. թէ եւ երբեմն դեպքու եղերքները կը
 լուացուէր, բայց լիսան առանձնութիւնը՝ եւ ձորե-
 րու արձագանքը զինքը սոսկումով կը պաշարէին :
 Նմեցող, կը տեսնես այս խղճալի կեանքը . եւ
 մարդ չեղած տեղը ինչպէս դժուարե ապրիլը . եւ թէ
 չքաւորութիւնը ինչէր կը բերէ մարդուն գլխուն .
 ըստ աւածիս թէ « Տեղե՛ք արե՛ն զո՛րք ի՞րէր » :

Նղջիկը այս ոգորմելի կերպարանօք կը պարտէր .
 երբ ինդ վեց ամսու վան ճամբու չափ հօրը քաղաքէն
 հեռացեր էր . օր մ'ալ սիրտը խիստ այրած՝ անօթի
 մնալէն, սրտին կակիծէն օ՛ր ընելով աչքէրը եւ
 ձեռքերը երկինք թարձացուցած զՆստուած իրեն օդ-
 նութեան կը կանչէր . չիմայ գիշերը մօտեցեր էր,
 եւ եղած տեղն ալ անտառ ըլլալով վախուն ծառի
 մը վայելաւ, անդադար կուտար ու կողբար : Երբ
 գիշեր եղաւ, ու համայն բնութիւնը մութ պատեց,
 աղջիկը լուսնի լուսով տեսաւ որ հեռուէն տասն
 երկու ձիաւոր կուգոյնին . մէյմ'ալ տեսաւ որ կըտ-
 րիճ տղայ մը ձիաւորներէն դատուած եկաւ իր ելած
 ծառին տակի ջրանձքը ձիւ ջրելու . կտրիճ տղան ալ
 իջաւ ջուր խմելու : Երբ տղան ջուր կը խմէր, տեսաւ
 որ ջուրի մէջ ծառին ստուերը կ'ընկնայ եւ վրան ալ
 մարդ մը կ'այ . մէկէն վեր նայելով ձայն տուաւ թէ
 ո՛վ ես . մարդ ես : բայց աղջիկը վախուն կը գողար

Եւ ձայն չէր հաներ, ձիաւոր կարիճը զարմացած
 արդեօք ծառին վրայ մարդ բուսեր է ըսելով կը
 խորհէր, բայց վերջը խելքը գլուխը եկաւ. իմացաւ
 որ անկարելի բան է ծառին վրայ մարդ բուսնիլ.
 ուստի կանչեց թէ ս՛վ ես դու. ձայն տուր ինձի.
 Աղջիկը, որ մարդէ կարօտ մնացեր էր, աչքերը ար-
 ցունք, եւ սիրտը ցաւօք պատասխանեց թէ Աստուծոյ
 ծառայ եմ եւ մարդ. կարիճը ըսաւ, վար իջիր. հոս
 ինչո՞ւ ելեր ես, կամ ս՛վ դքեզ հաներ ու ազ անդը
 դրեր է: Աղջիկը՝ աս կոչումը Աստուածային կողմանէ
 օգնութիւն մը համարելով ծառէն վար իջաւ, խորհե-
 լով թէ այս անմարդաբնակ տեղէն իմ ազատուելու
 պատճառ աս մարդը կրնայ ըլլալ, յիշելով այն առա-
 ծը թէ « Իման ինանու սեպուղ որէր », շիմայ կարիճը
 քովը մօտ. ուս. ու ի հարցուց թէ, ս՛վ ես, կամ որո՞ւ
 աղջիկ ես. աղջիկը ըսաւ, տէր իմ. աստեղը պատմելու
 անդը եւ ժամանակը շէ. քանզի առած է կըսուի թէ
 ' Էր ի շին զագնի զար. զգընսւր էրտէ քի- շմուլէ զար ''

Կարիճը աս խօսքը լսելուն պէս հրաման ըրաւ քովի
 եղողներէն մեկուն, որ վար իջնէ ու աղջիկը ձիուն
 վրայ դնէ: Այս կարիճ աղան՝ Աուրհան քաղաքի Փէլ-
 փէք թագաւորին Աւրթակամուշ անուն որդին էր.
 Հիմա աղջիկը ձին հեծցուցին, կերակուր տուին ջուր
 խմցուցին, գլուխը եւ երեսը գոցելով պահպանեցին

եւ մուշտակ (քիւրք) մ'ալ հագուցին , քիչ մ'ալ աս-
 դին անդին պարտելով որս չգանելէն ետքը դարձան ի-
 բնց քաղաքը , որ մէկ ժամ հետու էր : Վաղաք
 կրտսմ , աչքերդ տեսնար նէ , ինծի պէս չտեսնող կըլ-
 լայիր (բայց ոչ կուրու թեւմբ) . մինչեւ հիմա կըզար-
 մանամ թէ ան ինչ երկիր , ի՞նչ քաղաք ի՞նչ մե-
 ծութիւն , ի՞նչ դարդարանք , ի՞նչ պարսպաշինու-
 թիւն , ի՞նչ փողոցներ եւ ի՞նչ տուներու յարմարու-
 թիւն : Ի՞նչ վաճառք եւ ի՞նչ լումայափոխութիւնք ,
 ի՞նչ հագուստ եւ ի՞նչ փառաւորութիւններ , ի՞նչ
 մարդկանց քաղաքականութիւն , եւ ի՞նչ առաքիւնու-
 թեանց խոհեմ կացութիւն . ի՞նչ արգասիք եւ ի՞նչ
 ծաղկաւէտութիւնք , ի՞նչ բերք եւ ի՞նչ առատու-
 թիւնք , ի՞նչ դատք եւ ի՞նչ արդարութիւնք , ի՞նչ
 կշիւք եւ ի՞նչ ուղղութիւնք , ի՞նչ սէր եւ ի՞նչ կո-
 բայրայարդ բարեկամութիւնք ի՞նչ պատիւ միմեանց
 եւ ի՞նչ մեծարանաց երջանկութիւնք , ի՞նչ շուք եւ
 ի՞նչ շքեղութիւնք , ի՞նչ հարստութիւնք եւ ի՞նչ
 ընչաւէտութիւնք : Ես անկ քաղաքի քաղաքապետը կամ
 թագաւորը ո՛րչափ իբայիս զարմանալի կըլլայ այն ալ
 դուն մտմտա , իմ հոգս չէ : Հիմա արջիկն ալ դար-
 մացած իր վերջի բաղդին յոյսը առ Վսուած դնելով
 կը յիշէր այն առածը թէ , “ Լաւնքն էն էտի որք .
 ամեն քաղաք ” :

8911

և բեմն հիմա խորհէ թէ աղջիկը այսպիսի փառա-
 ւոր քաղաքի մը մէջ ինչ փառաւոր փառքի եւ շնորհքի
 պիտի հասնի : Բնագաւորին որդին հետեւեալ օրը
 աղջիկը աղախիններուն հետ բազմիք դրկելով մար-
 քել առաւ . եւ դշխոյսկան հանդերձներ հագցունե-
 լով մօրը քով դրկեց . եւ հրաման ըրաւ որ իր գլխուն
 եկածները մօրը պատմէ : Խեղճ աղջիկը բոլոր քա-
 շածները լալով պատմեց թագուհին լսելուն պէս դար-
 մացաւ մնաց թէ խոհեմ կեղծաւորը ինչ չարութիւն-
 ներ բերեր է այս խեղճ կուսին գլուխը եւ թէ հայրը
 ի՞նչպէս առանց քննութեան այս վիճակին մէջ ձգեր
 է , ու սկսեց նեղեալ աղջիկը մխիթարել ըսելով թէ
 մի վախճար , " Ա՛նճնքն սօսաւ սե՛գա պըր " եւ թէ " Ը-
 նանքն որոտաղ պըրնոս ի՛նչ " . եւ թէ " Լճեյն սօսաւ
 ե՛ճ " , կամ թէ Տե՛ւե՛ն պըրնոս ի՛նչ " : Թէ եւ
 աղջիկը այսպիսի խօսքերով քիչ մը կը մխիթարուէր ,
 բայց աշխարհիս մեծութիւնը եւ փոքր ոչինչ համա-
 րելով ըստ հին առածին կրսէր , " Պա- տի՛նէա պէր
 պըր , Բն՛ Բե՛նէ , պըր ե՛ւրե՛ն , Յի՛ր տի՛նէ ,
 Ը՛ւր Ը՛ր , Գ՛ւր Ը՛ր " : Ընտերնին միշտ
 ուրախութեամբ կը վարուէր , ու այնչափ սէր չէր կա-
 պէր անոնց , մանաւանդ կը վախճար ալ անոնցմէ յի-
 շելով այն առածը թէ " Տօրո՛ւր-գ՛ Բնաբնո՛ւր , Ետե՛ր-
 պըր " :

Եւ յս կերպով վեց ամիսի չափ անցնելէն վերջը
 Քերիկէք թագաւորը մեռաւ , անոր տեղը մեծ հանդէ-
 սով Աւրթ աղանմաւ շորղին նստուցին , բայց որով-
 հետեւ դեռ ամուսնացած չէր , ուստի իր մայրը թա-
 գուհին լեռնագիտ աղջկանը վրայ սէր ունենալով իր
 նորասպակ թագաւոր տղուն տուաւ Կստուածային օ-
 թինօր եւ թագաւորական մեծ հանդէսով : Հիմա լեռ-
 նագիտ աղջիկը եղաւ թագուհի , բարեպաշտ եւ վայե-
 լու չղարգուք եւ երջանիկ կենօր միշտ կը զուարճանար
 փառս տալով Կստուծոյ , որ զինքը ՚ի մահուանէ ա-
 զատելով , եւ ամենայն նեղութիւնն երէն ու վշտերէն
 փրկելով այս պիսի մեծ աստիճանի հասուց . ուստի միշտ
 խոնարհութեամբ կը կենար առանց հպարտանալու ,
 յիշելով այն առածը թէ , “ Կարսբան իսովի Լե-
 լան որք ” . մանաւանդ որ առջի բերան կրած նեղու-
 թիւնն երբ երբէք մաքէն չէր հաներ եւ խոնարհ սրտով
 Կստուծոյ փառք կուտար յիշելով այն առածը թէ ,

Է՛յ Տէլէք , քիմինէ գաժուն եեախիւրսին , քիմինէ քէլէք .
 քիմինէ գաթեման պիշէրսին , քիմինէ եէլէք
 քիմինէ թագուս գուշու վերիւսին . քիմինէ լէլէք .
 քիմինէ շէլթան կէօնտէրիւսին քիմինէ մէլէք
 քիմինէ համամէք իտէրսին քիմինէ տէլլագ
 քիմինէ պէօրէք վերիւսին , քիմինէ կէվրէք

Եւ յսպէս վեց տարի առ Կստուած աղաւթնելով ուս

բախ գուաթ ապրելէն ետքը երկու թագաւորածին
մանչ տղայ ունեցաւ , որ շատ սիրուն եւ կայտառ տղաք-
ներ էին : Քիչերմը նորապսակ թագուհին երազին
մէջ տեսաւ որ հայրը նստեր կուլար , թագուհի աղ-
ջիկը հարցուց թէ , ո՞վ հայրիկ , ինչո՞ւ կուլաս : Ի՞նչ է
ցաւդ . հայրը ըսաւ թէ ի՞նչպէս չիլամ , աշխարհիս վը-
րայ դաւակ մը ունեցայ , ան ալ անառակ ըլլալով .
ձեռքէս կորաւ դնաց , իս միտթարող մէկը չունիմ .
գիշեր ցորեկ կը ճգնեմ , ո՞ր էր որ այն աղջիկս ողջ
բլլար , բայց ինչ ընեմ : Եւ թէ եւե զայն , դեմ եւե
ճեարուք : Եւ յս առածը միտքս չբերելով՝ աղջկանս
արիւնը մտայ , անոր համար ամէն օր կուլամ , բա-
րեյորդոր խրատիչ մը չունենալուս համար ի կրիցս
բունադատեալ ըրի , ըստ առածին թէ , Եւ թէ պաշտ
Բ-Բու Կըր .

Եւ յից մեծարանու թիւն կընէի եւ իմ գլխուս գա-
լիքները չէի գիտեր , եւ չէի յիշեր այն առածը , որ
կսուի . « Գ՛օյն-ո պէ՛օյն-ո անլէ՛մէ . » թագուհի աղջիկը
այս խօսքերը լսելով աղիքը կտոր կտոր եղած . իր
անմեղութիւնը եւ հօրը անգիտութիւնը յիշելով՝
այն աստիճան բարձր ձայնով սկսեց լալ , որ թագա-
ւորը արթննալով ձայն տուաւ , եւ պատճառը հար-
ցոց թէ ի՞նչու համար քունին մէջ կուլար : Թա-
գուհի աղջիկը բուն պատճառը ծածկելով , երազիս

մեջ զիս կը ծեծէին , անոր համար լացի . ըսաւ , Թագաւորը յորդորեց Թագուհին եւ սիրտ տուաւ որ շիւլայ , ըսելով թէ այն երագէ , սուտէ , վալու ի՞նչ հարկ կայ . չե՞ս մի գիտեր այն առածը , որ կսուի
 "Եւ երբն աղայնն կեօղտէն օլար" :

Թագուհին թէ եւ առ երեսս լաեց , բայց իր ցաւը առանց մարդու յայտնելու մինչեւ երկու ամիս սրտին մեջ լալով օր օրի հալեցաւ . Թագաւորը տեսաւ որ Թագուհին օր օրի ձեռքէ էլլիլու վրայ է , ըսաւ անոր սիրուհիս , ինչո՞ւ ցաւդ ինծմէ կը պահես , ըսէ տեսնեմ . ի՞նչ է խնդիրդ : Թագուհին ըսաւ , Տէր իմ , ի՞նչ ըսեմ . չե՞ս գիտեր այն առածը , որ կըսուի
 "Երբեքտէնն -եօղ -ար , -բն-ը էօք , -եօլեօտէնն եէկ որբ -եօլեօտէտ , , : Ասոր վրայ Թագաւորը աւելի բարկացաւ եւ ստիպեց որ ըսէ ցաւը . Թագուհին անձար մնալով պատմեց հորը վրայով տեսած երագը : Ընտաննը Թագաւորը ըսաւ , կուղեսնէ , հայրդ հոս բերել տամ . Թագուհին ըսաւ , անոր հոս գալը աղէկ չէ , զիս հոն զրկէ . քանզի ինծի կը վայլէ անոր օտքը երթալ եւ հայրական օրհնու թիւնը ժառանգել Թագաւորը տեսաւ որ չղրկէնէ , պիտի հալի ու մաշի , ուստի իր վէզիլին յանձնելով , բազմաթիւ սպասաւորներու գործեր ալ մեկտեղ զրկեց , որ երթայ Թագուհին իր հօրը հետ տեսնուի : Զիմա Թագուհին իր

Երկու որդիով մեկտեղ կառքը նստաւ , վեղիքն ալ դօր-
 քերով ճամբայ ելան . Թագաւորը վեղիքին պատուէր
 տուաւ , որ որչափ կարելի է նէ , վնց ամսուան մէջ
 ասանի ու բերէ , ապա հրօժարակամ համարյրներ տա-
 լով բաժնուեցաւ : Մասաիկ որքն Թագիւր մէկ ամիս
 կամ աւելի ճամբորդութիւն ընելով՝ իր հօրը երկիրը
 հասնելու մէկ շաբաթուան ճամբայ մնացեր էր մէկ դի-
 շեր մը ինչպէս կըլլայ , Թագուհին կառքին պատու-
 հանին մեկը կը բանայ հիմա վեղիքը Թագուհի պատ-
 կերը տեսածին պէս յիմարեցաւ ի գեղոյն : Աւստի
 ինքնիրեն որ հիմա ասի իմա է , ով կրնայ ինձի բան
 ըսել . ես հիմա անի կը բանադատեմ , մինչեւ որ իմ
 չար կամքս յազեցունէ . այս խորհրդով գնաց կառ-
 քէն ներս մտաւ , եւ միտքը յայտնեց . աղջիկ Թագու-
 հին դարմացաւ ասոր համարձակութեանը վրայ եւ շատ
 խրատներ կուտար որ ան ապերախ տութիւնը չը գործէ
 իր Թագաւորին գէմ . բայց հնար չեղաւ : Իմա Թա-
 գուհին ազէկ սեպեց մեանիլ , բան անոր չար կամքը
 յազեցունել : Ալեղիքը տեսաւ որ խօսք մտիկ չընէր
 Թագուհին , երկու արքայածին դուստրերը մօրը աչ-
 քին առջեւ սպաննեց , որ Թագուհին վախու՛ն անձնա-
 տուր ըլլայ , Թագուհին դարձեալ գէմ կեցաւ : Ան-
 ատենը վեղիքը ըսաւ , հիմա քեզ ալ կըսպաննեն .
 Թէ որ ինձի չհնազանդիս . Թագուհին , որ իր երկու

դաւ ահն երբ արեան մեջ հայ ինննն միջած տեսաւ . սրտին
 կակիծ էն տակնու վրայ եղած , կաղաչեմ ըսաւ վէ գիբին .
 քիչ մը քովէս հեռացիր , որ հիմա իմ որդւոյս վրայ
 լամ . վաղ գիշեր հրամմէ եկաւր . որդէս զի ներկայ
 մտորձանքէն ազատի : Վէ իր ճաւատալով իօրին
 իր վրան ը դարձաւ , համարելով թէ վախուռ իր կամքը
 պիտի կատարէ : Թագուհին երբ տեսաւ որ վէգիբը
 քովէն հեռացաւ , դգեսաներուն վրայէն քուրձ մը
 հագաւ , կառքէն վար իջաւ , բանակէն հեռանալով
 գիշերը մինչեւ լոյս բալնց գնաց , եւ որդւոց կակիծ էն
 աչքին վախ եւ դաղանաց երկիւղ շէր ետեւնար . կտքը
 խոռոչի մը մէջ դոհուեցաւ , որ չգան զինքը գտնեն :
 Ասաւօտ որ եղաւ , աղախինները լոր տուին վէգիբին
 թէ թագուհին չկայ , եւ արքայորդիքն ալ սպաննուած
 արեան մէջ մնացեր են . վէգիբը իր յանցարը ծած-
 կելու համար Թագուհին կը մնտուէր ըսելով թէ ո՞ր
 է , կամ ի՞նչ եղեր է . շատ մը մնտուելէն վերջը՝ եր-
 բոր չգտան , վէգիբը ըսաւ թէ , այս որդիքը ի՞նչն ըս-
 տաններ ու միտներ գացերէ , որովհետեւ թագաւորը
 այս Թագուհին լեռնէն գտած բերած էր . լեռան աղ-
 ջիկ ըլլալով , հիմա որ լեռը տեսաւ նէ , վերստին իր
 բնակած տեղերուն կտրօտ ըլլալով գնաց հոն , Աս-
 սանկ ըսելով երկու որդիքը հոն թաղեց , եւ վրանին
 հոյակապ շիրիմ մը շինեց , գարշելին գլուխին , կտէր ,

Այն ճորտանին էլ սանտրի . եւ բանակը էտ դարձուց
Սուրհան քաղաքը երթալու :

Ընթերցող . թող ասոնք իրենց ճամբան երթան .
մեր քգանք հիմա թափառական թագուհին : Հիմա
խեղճը նորէն լեռները ինկաւ , սկսեց լալով եւ ողբա-
լով ապառաժ քարերը թնտացունել ան ըսելով կը
հառաչէր ու զ՛ստուած կաղաչէր ըսելով թէ , ով
Մուսա՞ իմ , ինչո՞ւ իս նորէն լեռներուն մէջ ձգեցիր .
ողորմէ ինձի : Խեղճը թէ եւ յանցանք չուներ . բայց
Մուսա՞ զանի այս փորձանքներով իբրեւ գոսկի ըսվին
մէջ կը մարբեր : Աղջիկ թագուհին երբէք իր յոյսը
չկարկեց . յիշելով թէ , 'Տաղ' արդա Կախալմաղ , Ինան
Ինան Կախալմաղ' : Աստի հօրը երկիրը մօտեցած
ըլլալով , կէս անթի եւ կէս կուշտ մէկ ամիս լեռները
պարտելով հօրը քաղսքին մօտ լեռան մը վրայ հովիւ
մը հանդիպելով հարցուց թէ այս ոչխարները որո՞ւ են
Հովիւը ըսաւ մէկ մեծատուն վաճառականի . որ
մարդ չունի , ոչ որդի ոչ կին եւ ոչ այլ ոք բայց
միայն մէկ ծառայ մը ունի , եւ մէկ խոկհմայր մը կայ
որ գիշերները կուգայ բարեկամութեամբ կը բօսնուն .
իրեն հարազատ բարեկամ միայն ան ունի : Խեղճալի
աղջիկը լսած ին պէս իմացաւ որ հօրը վրայ էր իստը
ուստի աչքերը լեցուած հովիւին հարցուց թէ որ երկ-
րացի ես նա ալ ըսաւ . ես հեռու տեղաց եկած եմ ,

որ այն մարդուն ոչխարները արծելով մէկ քանի ստակ
 վաստը կիմ, ու իմ երկիրս երթամ. բայց հովիւը ամե-
 նեւին չէր գիտեր թէ այս ո՛վ է, կամ մարդ է թէ կին
 է. ինչու որ վրան քուրձ հագած եւ մաղերը գլխուն
 մէջ պահած էր աւ վրայէն ալ հոն բան մը կապած էր.
 Աւտի աղջիկը հովիւն ըսաւ, ո՛վ եղբայր, հիմա քեզի
 երկու հարիւր սկիտամ նէ՛ երկիրդ կերթաս. հովիւը
 ըսաւ մէկ ժամ չեմ կենար. բայց այս ոչխարները
 ի՛նչ ընեմ. տերոջը տալու է. դուն հոգ մի՛ ըներ
 ըսաւ աղջիկը, ես անոնք իրիկուան տիրոջը տունը կը
 ձգեմ. միայն թէ դուն գնա երկիրդ: Հանեց երկու
 հարիւր սկին հովուին ձեռքը համրեց, որովհետեւ
 հետը ըստակ եւ ծանրագին քարեր ուներ, հովիւը երբ
 սկին աւաւ պիտի երթար, թագուհին ըսաւ որ վրայի
 մորթեղէն հագուստդ եւ մորթեղէն գլխանոցդ (իւլ-
 ժիախ)՝ եւ տալարձը իդ ու գաւազանդ տուր, որ ասկէց
 ետքը ես պիտի արծելմ ոչխարները: Հովիւը հաճե-
 ցաւ, եւ հանեց ամեն ուղածները տուաւ եւ թագուհի
 աղջկան՝ մնաս բարեաւ ըսելով ելաւ գնաց: Հիմա
 քեզի կըսեմ ո՛վ ընթերցող. երբէք ըլլալու բան է,
 որ թագուհին հովիւ ըլլայ, բայց մտիկ ըրէ առանը-
 ինչ կըսէ «Ինքի՛մաւ տըր, ա՛յ էֆե՛նդի՛մ. կի՛ն ու՛ր տե՛-
 րէրե՛ս իստի՛նաւ»:

Արտեսներս, ինչպէ՛ս ոչխարհ է եւ կամ ինտոր գալ:

որ մէկէն մարդս յետին աստիճակէն եւ չքանորս
 թեան կը փոխէ , ըստ առանձին թէ . « Գիտնականն ճշմարտ
 փնտնիչսն է » : Թու դաս որ եւ թագուհի՝ աշխարհ
 հիւ ունեցածն էրէն բան մը չունին . աննուստ աննե-
 ցածը կամ պէտք եղածը վերջ ապէս կրնը կանգուն
 երկայնու թեամբ փաս մըն է : Այս խորհրդով թա-
 ուհին հովիւին լոճեքը հազար , ասով որ ճշտը բովը
 կախեց , ցուպն ալ ձեռքը առաւ , իրիկուն ըլլալուն
 կը նայէր , որ երթալիս հայրը տեսնէ առանց ինք-
 ղինքը յայտնելու : Իրիկուն ոչխարները աղջիկը ձը-
 դելով դնաց իր հօրը առնը . հայրը եկաւ նայեցաւ որ
 հովիւը փոխուեր է . հարցուց թէ դու ո՞վ ես . սղ-
 ջիկը գինքը « ասէլով եւ անձը աղեղացունելով եւ
 դիտուն փակեցն ալ երեսին մինչեւ կէսը քաշած պա-
 տասխան առաւ թէ , ծառայեմ Եդայ , ձեր աղջի հո-
 վի ը իմ եղբայրս ըլլալով՝ երկիր դրկիցի , ես նոր եկած
 եմ , կը կամիս նէ , անոր տեղը ձեր ոչխարները ա-
 քածեմ , եթէ չէք կամիր նէ կամք ձեր եղիցի . ըստ
 առանձին թէ՛ « Իսկե՞նին հաւաքեմ եմ երկիրէն նստա-
 ըն » :

Երբ հովիւին խօսքերուն հաճելով ըսաւ որով-
 հե տեւ դուն անոր եղբայրն ես , բու վրադ կը գ թամ
 ասկէ ետքը դուն իմ ոչխարներս աքծէ , եւ երբեմն ալ
 արիջ կարելու որ ծառայեմ ինն ըլլալ նէ , ըլլէ : Երբեք

աղջիկը հաւատարմութեամբ իր գործը կը կատարէր .
 եւ երբեմն ալ զիշերները կը տեսնար որ իր նախաձրշ-
 նամի խոհեմ այրը կուգար հօրը հետ կուտէր , կը խը-
 մէր եւ ուրախութիւն կը ընէր . իր սրտէն արիւն կը քա-
 լէր . բայց բանը չստուծոյ ձգելով լուռ եւ կեծ կը կե-
 նար : Հիմա այս թագուհի աղջիկը թող իր հովուու-
 թեան պաշտօնը վարէ , մենք դառնանք ետ դարցող
 վեզիրին հետ ճուրհան քաղաքը մանկներ . . . թագաւ-
 որը տեսաւ որ թագուհին եւ իր սիրուն դաւակները վե-
 ղիրին հետ չեն , սկսեց լալ , ողբալ , աղաղակել եւ
 իրբեւ դառիւ մանչել . եւ երբ վեզիրին հարցուց թէ
 ո՞ւր են իմ թագուհիս եւ իմ որդիքս . վեզիրը կեղծա-
 ւորական լացեր թափելով Տէր իմ . ըսաւ . մինչեւ մէկ
 ամսուան ճամբայ կամ աւելի գացինք , որ ալ իր հօրը
 քաղաքն ալ մօտեցեր էինք . զիշերմը ելեր իր երկու որ-
 դին սպաններ եւ փախեր դպրեր է . այնքան փնտա-
 ցինք , չգտանք , ուստի արքայածին դաւակներդ մեծ
 սղբօք թաղեցի եւ վրանին շիւթ ալ շինեցի , ու դար-
 ձայ , եկայ : Թագաւորը այս խօսքերը լսելով տակն
 ու վրայ եղաւ , եւ դանազան կասկածներու երթալով .
 իր տեղը փոխանորդ մը դրաւ , եւ վեզիրը հետք առ-
 նելով տրամաթեամբ դնաց որդւոցը թագուած տե-
 ղը , ուր մեծ ողբ եւ կոծ թափելէն ետեւ , թագաւո-
 րը վեզիրին ըսաւ . եկուր քեզի հետ սա աղջկան քա-

դաքը երթանք, դուցէ իր հօրը տունը փախաածէ, որ
 եթէ հոն գտնեմ նէ, արդարեւ պիտի սպաննեմ ան
 շարը, որ իմ արդւոցս արիւնը մտեր է: Ա՛յ զիրը եր-
 թալ չուղելով՝ պատճառ կը բերէր ըսելով թէ տէր
 իմ, այն աղջիկը, որ լեռնէն գտար, կարծեմ թէ
 զիւական մէկ մըն էր, որ նորէն այս լեռներուն մէջ
 կորուսինք: Իսկ թագաւորը՝ աղջկան ամէն բանին
 տեղեակ ըլլալով՝ ստիպեց որ անպատճառ երթալու
 ենք: քանզի այսքան մօտենալէս ետեւ, ետ դառ-
 նալս ինձիցաւ կըլլայ. վասն որոյ ակամայ կամօք վէ-
 զիրը հնազանդեցաւ մէկտեղ երթալ: Ա՛յ զ շարածէ
 մը հասան այն լեռանը վրայ, ուր աղջիկ թագուհի
 հովիւը իր հօրը ոչխարները կտրած էր: Քովը գա-
 ցին. հիմա հովիւ թագուհին որ տեսաւ իր թագաւո-
 րը եւ վէզիրը, սիրտը ելաւ ու սկսեց լալ: Թագա-
 ւորը՝ զանի չճանաչելով թէ ով է, ըսաւ. ինչո՞ւ կու-
 լաս, հովիւ. ինչո՞ւ շիլամ, ըսաւ հովիւը. «Արի-
 քան ծնաւ մէկ ոչխարէն, ես եւ շունտ արեան ըլլալով
 քայլ եկա ու բռնեց,» ես զանոնք արեան հեղեղներու
 մէջ ողողաւած տեսնելով սիրտս կտոր կտոր եղաւ. ու
 կուլամ: Թագաւորը՝ այս հովիւին գթալիւր սրտին
 վրայ զարմանալով ըսաւ. ով հովիւ. հապա այն մար-
 դը, որ իր իրկու գաւակները կտրած մեռած տեսնէ նէ
 ինչպէս պիտի լայ. այս կտորին վրայ երկուքն ալ իր

րարու նայելով սկսան լալ: Թագուհի հովիւը հնա-
 րիւք եւ ծածուկ կը խօսէր. բայց Թագաւորը երբէք
 չէր իմանար: Ա՛րքապէս հովիւ Թագուհին հարցուց
 թէ՛ տե՛սք իմ. ո՞ւր րարով, ո՞ւր երթալու միտք ու-
 նիք. Թագաւորը ըսաւ թէ քաղաքը պիտի մտնանք եւ.
 պարտինք. ու դիչերն ալ վաճառականի մը տուն մնալ
 կուզենք. Թագուհին գիտնալով որ իր հօրը տունը
 պիտի իջնան, նորէն հարցուց թէ՛ տե՛սք իմ, ո՞ր վա-
 ճառականին տունը պիտի իջնաք. Թագաւորը ըսաւ.
 Ա՛րքօր վաճառականին տունը, որ միայն մէկ ծառայ
 ունի. մէկ անգամ ամուսնացած է, եւ մէկ աղջիկ
 ունեցած ու վերջը կորսնցուցած է: Թագուհի հո-
 վիւը պատասխան տալով ըսաւ, Ա՛ստուած ձեզ շրկեք
 է, որ ինծի պատահեցաք. այս ոչխարները այն վա-
 ճառականինն է. ես ալ անոր հովիւն եմ. ութը
 տարի է որ անոր դուռն եմ (ասանկ կըսէր, որ կաս-
 կածի չերթան), թէ որ կուզէք նէ, իրիկունը մօտ է
 մէկտեղ երթանք հոն. անոնք ալ հաճելով իրիկունն
 մէկտեղ գացին Ա՛րքօր վաճառականին տունը, որ մեծ
 պատուով ընդունեց աս նորեկ հիւրերը եւ համադամ
 կերակրօք յարգեց զանոնք. եւ իր խոհեմ րարեկամն
 ալ անոնց սեղանակից ըրաւ, որք կերան եւ արբին, ու-
 րախօսցան եւ զուարթացան. յետ կերակրոյն, որով-
 հետեւ ձմեռ էր եւ դիչերն ալ կրկայն. նստան եւ սկը-

սան անցած դացած բաներուն վրայ խօսիլ : Հովիւ աղ-
 ջիկը առանց խօսելու մտիկ կընէր . եւ մէկն ալ ղիմըը
 շէր ճանչնար . քանզի կը կարծէին թէ 'ի բնէ հովիւ
 է : Օրւարթ ու թեան եւ գրօսանքի համար վաճառա-
 կանք ստիպեց , որ խոհեմ բարեկամը վէպ մը (մաս ալ)
 ըսէ իրենց . որովհետեւ այն խոհեմը միշտ պատմու-
 թիւններ անելով վաճառակաւին սիրտը կը դուարձա-
 ցունէր : Թատաւորը եւ վէղիւրն ալ այս մարդուն բա-
 նազէտ մէկ մը ըլլալը իմացած ըլլալով՝ կը ստիպէին
 որ բան մը պատմէ . ու ստի խոհեմը սկսաւ սահեանե-
 րալ պատմու թիւնը ընել , որ իրենք իմաստօլից խօսքե-
 րու մեջ ամփոփուած է . . .

'Նախ' Առանց քննութեան եւ խոհեմն բանի մը
 ձեռնամուխ մի ըլլար :

«Մի-հարաւը էլ էմ-եր , զի թէ՛ք+իք էմ-ե+իդին +էլած
 «եօլէ-եմին զնաստիպէի եօ+ որաք , , :

Արորդ՝ «Այ գանահաթ , լօ+ տերեւէն , , ե-

Արորդ՝ «Տեանեառէ ճալ աքըլ որը : Մեռնին հի-նէրէ
 օլրոս+որան օմնրա , ճալ նէրէ՞ Լաղըճ , , :

Այս երեկ իմաստիս վրայ պիտի խօսի խոհեմը ,
 լսեցէք , կըսեր . քանզի առած է կըսուի . «Գրա-ն-
 քին հիստէ , , :

Ժամանակով անառակ եւ շաղլ տղուն մէկը՝ իր ծը-
 նողացը խօսքը մտիկ չընելով , այն չափ ինքզինքը զն-
 յարեց . . .

խուճեան տուաւ ու իր սրտին ամէն ուղածը կատարեց , չար ու ան բէն անձանց հետ ընկերանալով , որ ստակները հասնելով յետիւ առաջնաւ աղքատութեան հասաւ , եւ սկսեց ակամայ ձի քշելով որք չորս հինգ փարայ հաղիւ կը վատարկէր , ինչպէս որ առած է , կըսուի . « Եւ զի ան ինչն ան ինչն » զարսար օլճաղ , :

Աւտար այս տղան առանկ խեղճութեան մէջ մնալով երբ օր մը մեծատունի մը տուն ձիով փայտ կը կրէր , տեսաւ որ մեծատան մէկ հատիկ աղջիկը իրեն փայլուն անդամանդ կը ճեմեր սրահին մէջ բոլորովին սիրահասկեցաւ անոր գեղեցիկութեանը , առանց միտք բերելու այն առածը թէ , « Բէլլիս անդաղ , փայլուն ան ան ան » : Այս աղջիկը ինծի կին կառնեմ ըսելով տուն գնաց եւ կըստիցէր իր խեղճ մայրը որ երթայ մեծատունին աղջկան հետ խօսք կատէ : Խեղճ մայրը գիտեր որ ըլլալու բան չէ , ծօ տղայ , ըսաւ , դուն խեղճ ես , ինչի՞դ կը վատահասա , ի՞նչն չան ունիս եւ կամ ի՞նչ արհեստ . դուն քեզ պահելու անկարող ես , անանկ հարստութի մը աղջիկ ի՞նչպէս պիտի կերակրես . ես խեղճ եմ , որ երթամ խօսք բանամ : Տղան դարձեալ ստիպեց որ երթայ , թէ չէ՝ քեզ կը մեռցունեմ , ըսաւ : Այսինքն կամայ ակամայ իր պատրաստ Փէրաճէն հագած կըսէր , ինչ երեսով պիտի ելլեմ երթամ , եւ ինչ երեսով դիմացնին պիտի ել-

լեմ . եւ ի՞նչ համարձակութեամբ աղջիկ ուզեմ ինչ
 եւիցէ լալով հեկեկալով դնաց հասաւ մեծատան
 դուռը ներս մտաւ վեր ելաւ եւ բարեւեց զտիկինը ու
 նստաւ բաղմոցին մէկ ծայրը : Տիկինը ըսաւ . բարեաւ
 լիցի դալուսդ՝ մայրիկ . սէտք եղած պատիւը ցոյց
 տալի՛ն ետքը՝ հարցուց թէ ի՞նչ բանի համար եկե՞ր . ես
 խնդճ պառաւը ահամայ սկսեց ըսել . ես աղայ մը ու
 նիմ . հրամանոցդ աղջիկը կուզէ . անոր համար եկեր
 եմ . որ խօսք առնեմ , կուտա՞ք թէ չէք տար . տիկինը
 ըսաւ , մայրիկ հրամանոցդ դաւակը ո՞վ է . ի՞նչ կը
 սուի , ի՞նչ արհեստ եւ ի՞նչ մեծութիւն ունի . ի՞նչ
 հնարքի տէր է , ուսումնական է , լեզուներ գիտէ .
 նոր գլուխներէ՞ն թէ հին գլուխներէն : Մայրը ը-
 սաւ , իմ աղաս չուլթութեամբ է , վրայ գլուխ չու-
 նի . արհեստը աթ համալի է , կարդայ չգիտեր է շու-
 պէս բան մըն է . ըստ առածին թէ , "Սէրէն է-տի՛ն ,
 Կորնի-ն է-տի՛սըն , պէ+լէյն ծանր շրջաւորն" :

Կործ մըն ալ ընել տալ ուզես նէ , հողի կը քա-
 կէ մինչեւ որ կատարէ , ուտէ՞նէ , ախորժակը տեղն է .
 չորս հօխայ հացը մէկ նստելուն կուտէ . օրը վաստակը
 վեց փարայէ , վրան գլուխը "Չաւն"ի շաւնն հացդար
 նոսրայ" . ասանկ անուանի դաւակ մը ունիմ . հարուստ
 է , բայց ոքիլով . ունեւոր է , բայց աղտով քօրաւոր
 է , բայց աղքատութեամբ . ահա ասանկ պատիժ աղայ

մը որուն իմ . չըլլայ որ մտնաս եւ ապա առածը անոր առջեւ
 և ը յիշես , Պերեն յիշե , պիտի ես-ն օ պերեն էլ լինի հազար
 թաթ : Սեղան բերուած կերակուրները ըստ ըր ըմէկէն
 կը լափիէ , անանկ որ կրամ ու աղայ մըն է , որ ինչ ընելու
 չեմ գիտեր , վախուս հոս եկայ , եմ է չգայի նէ , իս
 խղղէր . ոչ ամօթ գիտէ , եւ ոչ պատկառանք . ըստ ա-
 ռածին թէ . « Ըրբն նէտէն աբլանըբ , ըստ սա կէտէ ,
 սալլանըբ : Ինչ ընեմ . ինտոր ընեմ . շատ հեղմա-
 նածիս դրամովը կը պահեմ , դաւակ է , ձեռքէ չի հա-
 նեմ ըսելով հացը կը ճարեմ , գուցէ օր մը խելքը
 դըռնիսը կուգայ , մարդ կըլլայ . քանդի դեռ երիտա-
 սարդ է : Տիկինը ըսաւ , շատ աղէկ խօսեցար , մայ-
 ըիկ . բայց չեմ կարծեր որ աղադ խելաբերի . քանդի
 անանկ անառակներուն վրայ է որ կը սուրի . « Իսպա-
 իս-հոանսան վաղ ինչեղ , ես ինչեղ , ես ինչ » : Ինչ
 ինչեղիցէ քու դաւակդ է , ես հիմա աղջկան հա-
 մար խօսք չեմ կրնար տալ . աղ ըսածներդ աղջկան
 հօրը կը պատմես , կուտայ , շատ , ինք գիտէ . աղջիկը
 իրն է : Պեստի հայրը կանչեցին , կը իկը մի ըստմիօջէ
 ողբալով պատմեց անոր (հիմա խոսեմը որ այս պատ-
 մու թիւնը կընէր թագաւորը եւ վէրիւրը վաճառական
 Ըբլօրը եւ հովիւ աղջիկը ամենը զգուշութեամբ մտիկ
 կընէին) . մեծատունը ըսաւ , գնա դաւակդ կանչէ ,
 տեսնեմ ինչ տեսակ մարդ է , մայրը գնաց շուտ մը

բերաւ իր որդին եւ կանգնեցուց մեծատան առջեւ
 վրան գլխիսը պատուած ձեռքերն ու երեսը մրձուած
 եւ արեւէն սկիզբ առքերը միջեւ սրունքները ցեխե-
 րէն ազակտուած, այնպիսի զօրմանալի հրէշ մը, որ
 յաւեա դժպիտէն ելած ստանաներուն կը նմանէր :
 Հիմա տղան այս այլանգակ կերպարանքով ցրտէն դողն
 ու աքսափը սիւսը առած՝ մանր ֆիւօյի նման մեծա-
 ւորին առջեւ կը դողար : Մեծատունը ըսաւ ո՛վ որ-
 դի՛ . այս ի՞նչ կերպարանք է, այս ի՞նչ խեղճութիւն
 է, դուն՝ բաւ պահտութիւններդ չհողան : դուն քեզ
 չանամես, որ ելեր աղջիկ ալ կուզես : այ՛, կերպա-
 րանքովդ ի՞նչ պէս օտարի գաւակ պիտի պահես, վայե-
 յա՛ն է . « Հիւ՛ տեղեր պարաստես դիմախաւ, էտիօս
 զամպտ է-գընը ճը » : Եւ յս բաները դու չես մտա-
 ծեր . հիմա ի՞նչ որ աղջիկօ քեզի տամ, որը յիսուն
 դուրս շի դուստիսի բայտի քիզի, դուն որը յիսուն
 մանդրը չես վաստիկիր : Տղան մեծատան այնխոսքե-
 րուն պատասխան տալով ըսաւ, ինչ կընես, ըրէ . դիս
 մէկ գործի մը վրայ դիր, տես ի՞նչ պէս աղայ մը կը լը-
 բամ, որ դուն ալ կը գործանաս . դուն այն առածը
 չես գիտեր որ կըսուի . « Քեզինէ՛ր պիտե՛ս եր է-
 րը » : Դուն իստուակ չուլլու խուտուղ տեսար
 տէ, տէ յիսունէ՛ն : Եկող մի դի՛ցար . առանկ չքափ
 երեսելովս դի՛ս այն առածին տեղը դիր, որ կըսուի .

« Այլի ափսոսք ինչեք և ոչի ապագանէ սեփեթի՞ զ անու-
րքն » :

Ինչպէս ընեմ . աղքատութիւնս ինձի մեղք չեղաւ
ա, ևս ալ հօրմբ դաւակեմ . փառք Աստուծոյ վի-
ճաւաս սղջ է , կարիճու թիւն ունիմ , չիչ շատ կը վաս-
տըկիմ , կը սրահեմ ըստ առածիս . « Առ Դեմեքե՛ն , ը-
դասնոս աստիճար . Ըշմարիտ կըսեմ , լիս քու մէկ
գործոյդ վրայ դիր , տես ի՛նչ կարիճու թիւն կը ցու-
ցուենեմ : Մեծատունք անսաւ որ ճարտար լեղու ու-
նի , և ճարտիկ կը պատասխանէ , ծօ աղայ , ըսաւ ,
ևս քեզ փորցած չըլլալուս չեմ դիտեր . իմ գործս
քեզի ինչպէս հաւատամ չե՞ս մի գիտեր այն առածը ,
որ կըսուի . « Կեմեքե՛ն արքն արքն Կը՛նէ , ևս գա՛նար ,
ևս Բեթէր » : Տղան ըսաւ , հրամար ևս Աղայ , ևս աղ-
առածը դիտեմ : Բայց փորցելը դժուար բան մը չէ
ա , Աստուծոյ փառք . ևս հասեմ քու կարծիքս Հօն
թող ըլլայ . « Ընչեղ զ ասիսէ , արքն արքն արքն ,
« Բեթէմ ըրէ , փորձէ , Աստուծով տես թէ ինչ քա-
ջու թիւն կը ցուցուենեմ . մեծատունք ըսաւ , ով աղայ .
սիրտս քեզ սիրեց ճարտար խօսքերուդ համար : Տիտա
քեզ հառու տեղ մը գործի մը դրկեմ նէ , կերթա՞ն
Օ՞ք ըսաւ աղան , ճէհէննէ մէն կրակ բերեցաւ ալ դար-
կես , ճամբան ոտքերս և ձեռքերս թափի , լեղուս
չորնայ նէ , ահա ներ ովս կե յմամ , կ'որն ե՛րեւ կը լե-

բեմ . սակայն ստակ չունիմ . ճամբան ու ամեն բան
 բուսցունողը ստակն է , ըստ առածին թէ « շէ շէ
 էրէն նաւա պէ , էլ շէ շէ բէն ագնէ պէ » : Մտաւոր փա-
 րայ ըսածդ սարաֆին խանութը եւ միւր խասապին
 չէնկէլը կը տեսնեմ . փոքայ ըսես նէ , ճէպս պիրին-
 ճիները կը պէքլէյէն կորոյ բերանս չոր հաց եւ մաղ-
 տանոսէն դատ բան չէ մտեր . խոտ ուտելով ճգնաւոր
 դարձած եմ : Աողմաս եւ Ղամիանոս անարժատ բը-
 ժիշկները՝ իմ ամուճայիս տղաքներն են , անանկ մէկ
 կուտսուղ ու ղիւլամ եմ , որ լեզու կուզէ պատմելու .
 ալ դանակը ոսկորս հասաւ , քաշելու ճարս չիմաց .
 իշտէ քու դուռդ ինկայ , քու շանիդ եւ շէօհրէթիդ
 ի՞նչ կը վայլէ նէ , ան ըրէ . քու դանէդ եւ քու աղ-
 ջկանդ սէրէն բնաւ դատուելիք չունիմ՝ մինչեւ որ հո-
 գիս ելլէ : Մեծատունը ըստւ մեծ մեծ կը ջարդես կոր ,
 վախնամ վերջը չբերես . տղան ըսաւ . Ղատուած որ
 հետս ըլլայ նէ յանշուշտ խօսքերուս կատարը կը տես-
 նես . ես յոյսս Ղատուածէ չեմ կտրեր . այս հաւատ-
 քով եմ . կամք լրէ , ստակ տուր , ձի քաշել տուր ,
 եւ ճամբու զգեստ պատրաստել տուր , երթալ գործ
 կատարել եւ դառնալը ինձմէ : Ղոյս ամեն խոհեմ
 խօսքերուն եւ յաջող պատասխաններուն հաւնեցաւ
 մեծատունը , եւ երկու հաղարդուրու շտուաւ որ եր-
 թայ ձի առնէ , լաթ առնէ , եւ ճամբու պատրաստու-

Թիւններ տեսնայ ու դառնայ իր քովը . աղան շուկայ
 ելլելով աւ ամեն պատրաստութիւնները հողաց եւ
 դարցաւ իր քովը : Իմա մեծատունը հրաման ըրաւ
 որ ետեւի Վարժօշ քաղաքը , աւ պատճառը իմա-
 նայ թէ ինչո՞ւ համար այն կրօնաւորը ժամը ու թնին
 աղօթարանի մը քով կուգայ եւ կը կայնի ամեն օր եւ
 ամեն անցնող դարձողներուն մէջ մէկ ապտակ զարնձ
 կուտայ . ու առտու ընէ մինչեւ ժամը ու թը մուրացած
 ստակները ապտակ զարնողներուն կը բաշխէ եւ ետքը
 իր խուցը կը դառնայ նաեւ կերած ապտակներուն հա-
 մար օ՛խ ինծի արժանի է , ինչո՞ւ կըսէ եւ եթէ իմա-
 նա աւ դաս ինծի տեղն 'ի տեղը պատմես , աղջիկս
 քիզի կուտամ , եւ քեզ իմ ստացուածոցս տէր կընեմ :
 Տղան ըստ արտով հաճեցաւ երթալ , մեծատունը
 ճամբու ծախքի համար քանուերկու քսակ ստակ
 տուաւ . եւ աղան հրաժարական ողջնը տալով ճամ-
 բայ ելաւ . մէկ ամիսէն Վարժօշ քաղաքը հասաւ ,
 ձին պանդոկի մը մէջ կայեց ու ս՛ճարանի մը մէջ նըս-
 տաւ , հոն գանուողները անոր գալուստը բարեւելով
 սուրճ , շուպուխ եւ նարկիլէ բերել տալով պատուե-
 ցին , եւ ճամբու խաղաղութիւնը կը հարցունէր իւրա-
 քաչիւր ոք . բայց աղան հարցուց թէ հոս սա տեսակ
 կրօնաւոր մը կայ մի . պատասխանեցին թէ այո՛ . եթէ
 կուգես նէ , մինչեւ ժամը ու թը կեցիր , անի սա մեր

դիմացի աղօթք սրանին քով կը կայնի : Տղան սպանեց ,
 եւ անաւ ժամը ու թնին կոյր կը օնաւորը դաւադանը
 գեւորնը դարնե լով եկաւ աղօթք արանին աւջեւը երեսը
 անցնողներուն դարձունե լով կայնեցաւ եւ սկսեց ա-
 զաղակել թէ . Ասուած սիրողը ինձի ապաստակ մը դարնե
 անցնողներն ալ ստրված ըլլալով մէ յմէկ ապաստակ երե-
 սին դարնե լով կերթային . ու կոյրը՝ արժանի է , օ՛ր
 թող ինձի խրատ ըլլայ . ըսելով մուրացած ստակը կը
 բաշխէր . եւ ստակը հատնելէն ետքը՝ իր խուցը կը
 քաշուէր : Տղան՝ կամացուկ մը ետեւէն գնաց . կոյրը
 դանդակը մտաւ , ձեռքը քսելով բանալին խօթեց որ
 սխախ բանար , ահանջին մարդու ոտքի ձայն եկաւ եւ ի-
 մացաւ որ մէկը կար , ըստ առածին թէ՛ « Բեռք Եօրժեզ
 կ՛մա օ՛ղէր » : Աւտի հարցուց թէ՛ ո՞վ կայ հոս . տղան
 ըսաւ , ո՞վ հոյր , հետու ճամբայէ եկած եմ , մէկ աս
 գիշեր իս քեզի հիւր ըրողունիլ հաճէ բանդի հոս մէկը
 չեմ ճանչնար . կոյրը ըսաւ , հրամմէ եղբայր Ասու-
 ծոյ փառք . դուն ինձի բնա չես ըստ առածին թէ
 « Ինձ ան Իսսանա Եփ+ օրէիլ , ծան ալա թէնէ օր-լ օրէիլ » :
 Տղան ներս մտաւ , անաւ որ ոչ ճրագ ունէր , եւ ոչ
 ալ ուտելիք . ուտի շուտ մը դուրս ելաւ եւ քիչ մը
 ուտելիք ու մամ մը առաւ , եկաւ ու նստաւ ուտելու
 կոյրն ալ իր չորցած հացերէն քիչ քիչ թրջելով կե-
 րաւ : Ա կըրջապէս երկուքը գէմ առ գէմ նստան եւ

սկսան խօսիլ . խօսքը՝ խօսք բանալով բանը հոն հասաւ
 ինչպէս առած է կըսուի . « Եւ եղ զեհրեմիայի , զի ան-
 աս համարաւ » : Այլը հարցոց աղան թէ , մասկից
 կուդաս եւ ի՞նչ բանի համար . աղան ըսաւ , ինչպէս
 հրամանոցդ համար այսչափ ստակ եւ այ՛ չափ ձամբու-
 նեղութիւն քաշելով հասեկած եմ , կողաչեմ . ինչ է
 ցաւդ , բտէ ինձի , որ իս դրկողին լար տան իմ . քանի
 ես ալ Վ. դոյնի տէր մարդ եմ դիս պարագ եւս մի գար-
 ձուներ . ինչո՞ւ մտքացած ստակներդ աղտակ դարձող-
 ներուն կը բաշխես՞ . եւ ինձի արժանի է , կըսես : Այլը
 կրօնաւորը ըսաւ , մի որդի , իմ ցաւս մեծ է , եւ մար-
 դու շեմ կրնար բտել . քանի անանկ լսեր եմ թէ Ասդ-
 լակ քաղաքը , որ ասկէ մէկ ամսուան ձամբոյ հետե-
 է , Շարժեր անուսով լաթ լուացող մը կայ , ամեն օր
 տաշար կը գնէ ոչ մեղախաներուն լաթը լուացողի-
 մացն ալ մէկ աշտարակ մը կայ , քանի որ այն աշտա-
 րակին կը նային է , ահա եկաւ , ահա եկաւ , ահա ե-
 կաւ ըսելով լաթերը կը ձգէ ու այն աշտարակին մը
 կելլէ , եւ նոյնն մօր կիշնէ . մի բջ ապէս աշտարակ
 ելլելով եւ իջնելով օրը հարիւ մէկ թաշախնակ կրնայ
 լուալ : Արթնաս առաջ անոր ցաւը կիմանաս , ու ետ-
 քը կուդաս . ան ատենը ես ալ իմ ցաւս քեզի կը
 պատմեմ : Ասդաչեմ , ըսաւ աղան . առ դժուար ա-
 սոջսրկութիւնը ինձի մի ընէր , շնորհք ըլլէ միայն քու

ցաւդ ինծի ըսեսնէ, բաւական է. կաղլակ քաղաքը ո՛վ
 պիտի երթայ. կ'յո՞ր ըսաւ, դուն դիտես. մինչեւ որ
 անոր ցաւը չիմանաս եւ ինծի չը պատմեսնէ, ես ալ իմ
 ցաւս քնի չեմ պատմեր. Տղան մտածեց որ չերթալը
 անհնար կըլլայ. ուստի նոյն գիշերը հոն մնաց եւ հե-
 աեւեալ առտուն կանուխ հրաժարական ողջոյնք մա-
 ըով ըսաւ. «Մա՞ն աքաղաղութի՞նք, արտաքան «
 նախնայն տեղէ. եկեր թաղայ սող քորսս կե՞նէ, կեօրե-ք-
 րե-զտե տե՛րե՛րէ» :

Հիմա տղան ճամբայ ինկաւ եւ մէկ ամիսէն հասաւ,
 կաղլակ քաղաքը, եւ գնաց լաթ բուացող Շար-
 գաւաւ, եւ յետ բարեւելոյն կուզեր որ իմանա Շար-
 մէրի ցաւը, տեսաւ որ ոչ գործելու ժամանակ ունի
 եւ ոչ խօսելու. քանզի անդադար աշտարակ կըլլէր եւ
 կիջնէր, ըսելով թէ ահա եկաւ, ահա եկաւ, ահա ե-
 կաւ: Տղան հեռուն կայնած դարձանալով կը նայէր
 թէ, խենթ մարդն անգամ ասանկ բան չընէր. վեր-
 ջապէս Շարմէրի դիմացը սրճարան մը կար, ձին հոն
 ծառիե կապեց, եւ ինքն ալ սրճարանը նստաւ եւ կը
 մտածեր թէ անոր հետ խօսելու ինչ միջոց գտնէ, հոն
 նստողները ըսին որ, ո՛վ սիրելի, ցորեկը անոր հետ
 խօսիլ անհնար է, անիկայ գիշերը խանութը կը պառ-
 կի, կուզեսնէ, հոս կեցիր, իրինկունը խանութը գո-
 ցելու ասեն՝ դնա՛, ինչ խօսք ունիսնէ, հետը խօսէ և

Արքի երկուսն եղաւ , սղան տեսաւ որ Շարմէրը խա-
 նութիւնը կը գոցէ , վաղեց քովը գնաց , եւ յետ քարե-
 ւելուն խնդրեց որ այն գիշերը հոն մնայ : Անիկայ ալ
 հաճութիւն ցուցունելով՝ երկուքը ՚ի միասին նստան ,
 շատ մը խօսքէն ետքը՝ Շարմէրը հարցուց տղուն թէ ,
 ի՞նչ գործի համար ելեր ես այս կողմերը . տղան ըսաւ ,
 ես իմ երկրէս ելայ , նախ հասայ ՚ի Քարթաշ , որ
 կոյր կրօնաւորի մը ցաւը իմանամ . նստալ զիս քեզի՝
 դրկեց , որ առաջ քու ցուգ քեզմէ իմանամ . կաղա-
 ջեմ , շնորհք ըրէ ցաւդ բռէ ինձի : Հիմա Շարմէրը
 այս բանը որ լսեց տղայէն , պատասխան տուաւ թէ ,
 շատ աղէկ՝ ես իմ ցաւս քեզի կը բռնի , բայց ասկեց մէկ
 ամսուան ծամբայ հեռու մէկ քաղաք մը կայ հոն մէկ
 վաճառական մը կայ , երեք չորս տարի վաճառականու-
 թեան կերթայ , երբոր կուգայ , իր տանը քովի գե-
 րեզմանին երկու ծայրը տնկաւած քարերուն այնչափ
 ինքըզինքը կը գործէ , որ ամէն կողմը կտարտելով
 մեռելի տէս կիյնայ . վերջը թէ՛ ճիւղէն դնելով տուն
 կը տա ին , եւ բոլոր վաստակածը բժիշկներուն կը
 վատէ եւ երբ կառողջանայ , նորէն վաճառականու-
 թեան կերթայ եւ կուգայ նոյնպէս իր վաստակածը
 բժիշկներուն կը վատէ : Այն քաղաքին անունը
 Շիշէկ եւ մարդուն անունը թուրքաս վաճառական
 կըսուի : Գնա՛ առաջ անոր ցաւը իմացիր , ու եկուր :

ես ալ իմ ցաւս բիցի պատմեմ : Տղան երբ այս խօսքերը լսեց , պաղկցաւ մնաց . քանզի չէր կարծեր այնչափ երկիր պըտըտել հարկ պիտի ըլլար . բայց կամայ ահա մայ յանձն առաւ երթալու :

Երեսուեալ աստուան տղան հրստ-րական ողջոյնը տալով ճամբայ ելաւ եւ մէկ ամիս երթալէն վերջը Շիշլէկ քաղաքը հասաւ , եւ անոր ասոր Թուրքաս վաճառականին տունը կը հարցունէր . տունը գտնելով ներս մտաւ եւ հարցուց թէ ո՞ր է Թուրքաս վաճառականը ընտանիքը պատասխան տուին թէ հոս չէ վաճառականութեան գնաց . տղան զարմացաւ , մնաց : Հարցուցին թէ , հոս , ըլլար նէ , ի՞նչ պիտի ըսէիր . տղան ըսաւ , լսեր եմ որ վաճառականութեան երթալ նէ , հազիւ երբեք կամ երէկ տարիէն կուգայ , ո՞րչափ աստե՛ն է երթալը . ընտանիքը պատասխանեցին թէ , երեք տարի է , բայց երբ գալը չենք գիտեր : Տղան տրտմութեամբ լեցուած՝ մէջ աս ինչ դժուարութեաց հանգպեցոյ ըսելով՝ գնաց պանդոկ մը իջաւ . որ մինչեւ եւ գարնէ , սպասէ : եւ կը վախճար ալ թէ չըլլայ որ նա ալ պիտի ըլլէ մէկ հետու տեղ մը զրկէ , այս ի՞նչ փորձանք է որ գլխո՞ս եկաւ . պարտադրաբար նէ , մեծատունը երս զջիկը չտար , մանաւանդ եթէ աս ետքէն ալ սաանց յուր մը տանելու երթամ նէ , իմ վեճ մեճ իստ-տեսնք՝ երս ո՞ր գնեմ : Այս խոսքհոսք-

դով վեց ամիո սպասեց նոյն պանդոկին մէջ որ մը տղան
 տեսաւ որ քաղաքին բազմաւթիւնը իրարու իմաց տալով
 դէպ ՚ի գերեզման կ'վ սղեն այս տղան ալ առանց բանին
 էութիւնը դիտնալու հետերնին կերթար տեսաւ որ
 թէ ճկերէն պատրաստ դրուած՝ մարդիկ իրարու կըսէին
 թէ հիմա կուգայ, հարցուց տղան թէ եկողը ո՞վ է (Թուրք
 բաս վաճառակ սնն է, ըսին տղան լսելուն պէս խիստ
 ուրախացաւ : Մէյմ ալ տեսաւ որ Թուրքասը ձիով ե-
 կաւ այն երկու քարերուն քով եւ ձիէն վար իջնալով
 սկսեց մէկ քարէն մէկալին դարնուիլ միշտ որ չորս դին
